



Հանրային տեղեկատվություն  
և գիտելիքի կարիք

հասարակական կազմակերպության

## ԾՐԱԳՐԱՅԻՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2007-2014  
թվականներ





|   |    |
|---|----|
| Նախաբան   | 4  |
| «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» ՀԿ-ի<br>պատմությունը                                      | 6  |
| Կազմակերպության տեսլականը, առաքելությունն ու<br>արժեքները   | 8  |
| Կազմակերպության խորհուրդը   | 10 |
| Կազմակերպության 2014թ. հիմնական աշխատակազմը   | 12 |
| Կամավորությունը ՓԻՆԲ-ում  | 14 |
| Շահառուներ, ծառայություններ և գործունեություն   | 15 |
| «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» ՀԿ-ի<br>կողմից իրականացված հիմնական ծրագրերը 2007-2014թթ. | 18 |
| Հետազոտություններ, վերլուծություններ և այլընտրանքային<br>զեկույցներ                                   | 34 |
| Ցանցեր և կոալիցիաներ  | 43 |
| Ֆինանսական հաշվետվություն   | 47 |
| Կազմակերպության ֆինանսական քաղաքականություն   | 50 |





Բարև,

Ձեզ եմք ներկայացնում «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» հասարակական կազմակերպության յոթ տարիների գործունեության հաշվետվությունը, որը հնարավորություն կտա համապարփակ պատկերացում կազմել անցած տարիների ընթացքում մեր կազմակերպության գործունեության ուղղությունների, իրականացրած ծրագրերի և արդյունքների մասին: Թե որքանով է մեզ հաջողվել իրականացնել մեր առաքելությունը և հասնել նպատակներին, կարելի է իմանալ ինչպես հրապարակված զեկույցներից, այնպես էլ քաղաքացիներից, որոնք տարիներ շարունակ մասնակցել են կազմակերպության գործունեությանը, միջոցառումներին, օգտվել են կազմակերպության մատուցած ծառայություններից:


Կազմակերպության գործունեության յոթ տարիների ընթացքում մեզ հաջողվել է երիտասարդ, նոր ձևավորվող կազմակերպությունից վերաճել Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում հեղինակություն ունեցող կազմակերպության: Սակայն այս ամենը հնարավոր չէր լինի պատկերացնել առանց կազմակերպության միջմասնագիտական թիմի պրոֆեսիոնալ աշխատակիցների, որոնց նվիրված աշխատանքի շնորհիվ կազմակերպության բազմաթիվ շահառուների անլուծելի թվացող խնդիրները ստացել են արդյունավետ լուծումներ: Համոզված եմ, որ կազմակերպության արդեն իսկ հարուստ փորձը, նախանշված նպատակներին հասնելու գործում սկզբունքայնությունը և հետևողականությունն այսուհետ ևս կծառայեն կազմակերպության գործունեության ամրապնդմանը:

Սակայն կազմակերպության անցած գործունեությունը միշտ չէ, որ հարթ է ընթացել: Թե՛ կազմակերպությունը, թե՛ կազմակերպության անդամները պարբերաբար ենթարկվել են հարձակումների՝ իրականացրած մարդու իրավունքների պաշտպանության գործունեության համար, բայց իրականությունն այն է, որ մենք դեռ գործում և շարունակում ենք մեր առջև դրված խնդիրները լուծել պատվով և բարձր մասնագիտական որակներով: Արտաքին հանգամանքները մշտապես կարող են փոփոխվել և դրանք կախված չեն մեզանից, բայց ամենակարևորը մեզ համար վճռորոշ պահերին կայացրած ճիշտ որոշումներն են, որոնք հիմնաքարային են դարձել մեր այժմյան և ապագա գործունեության համար:

*Հարգանքով՝*

*Մամիկոն Հովսեփյան*

*«Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» ՀԿ հիմնադիր*



# Նախաբան



2014թ-ի դեկտեմբերի 14-ին լրացավ «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» ՀԿ-ի հիմնադրման և գործունեության յոթ տարին: 2007թ դարձավ այն տարին, երբ երեք խանդավառ երիտասարդներ որոշում կայացրին ստեղծել կազմակերպություն, որը դժվար ճանապարհի պետք է անցներ՝ իրականացնելու այն աշխատանքը, որը դեռևս այդ մասշտաբով չէր իրականացվել Հայաստանում: 2007թ-ի դեկտեմբերի 14-ին ստանալով գրանցման վկայականը, հասկանալի էր, որ հետադարձի ճանապարհի այլևս չկա: ՓԻՆԲ-ը պետք է իր մեծ ներդրումն ունենա Հայաստանում քաղաքացիական հասարակության զարգացման և ժողովրդավարության կերտման գործում: Ամեն տարի ավելանում են կազմակերպության կողմից իրականացվող ծրագրերն ու միջոցառումները, աշխատակազմը համալրվում է տարբեր մասնագետներով: Տարիների աշխատանքի արդյունքում ՓԻՆԲ-ը ներգրավվել է տեղական և միջազգային ցանցերի աշխատանքներում և այսօր արդեն միացյալ ծրագրեր է իրականացնում ոլորտում փորձառու կազմակերպությունների հետ: Տարիների գործունեության ընթացքում մեզ ֆինանսական աջակցություն են տրամադրել բազմաթիվ դոնոր կազմակերպություններ, որոնց շնորհիվ կրթատեղեկատվական միջոցառումներ են կազմակերպվել Հայաստանում, իրականացվել սեռավարակների կանխարգելման և մարդու իրավունքների պաշտպանության, շահերի պաշտպանության ծրագրեր, տրամադրվել են հոգեբանական, իրավական և սոցիալական ծառայություններ կազմակերպության շահառուներին, ներկայացրվել են մարդու իրավունքների իրադրությունը, շահառուների խնդիրները տարբեր տեղական և միջազգային հարթակներում և այլն:

Սույն զեկույցն ամփոփում է կազմակերպության անցած ուղին, ինչպես նաև հակիրճ ներկայացնում է կազմակերպության պատմությունը, յոթ տարիների ընթացքում կազմակերպության կողմից իրականացված ծրագրերը, կազմակերպության խորհուրդն ու աշխատակազմը, ովքեր ներգրավված են կազմակերպության ամենօրյա գործունեության մեջ:

Հավատարիմ մնալով մեր կողմից որդեգրած արժեքներին, որոնց մասն են կազմում նաև թափանցիկությունն ու հաշվետվողականությունը, զեկույցում ամփոփում ենք նաև կազմակերպության բոլոր տարիների ֆինանսավորման աղբյուրներն ու կազմակերպությանը տրամադրված գումարները:

*Հարգանքով՝*

*Նվարդ Մարգարյան*

*«Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» ՀԿ նախագահ*

«Հանրային տեղեկատվություն  
և գիտելիքի կարիք»  
ՀԿ-ի պատմությունը



Կազմակերպության աշխատակիցները, անդամները,  
գործընկերները (Լուսանկարը՝ Նազիկ Արմենակյանի)


«Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» ՀԿ-ն հիմնադրվել է 2007թ-ին: Կազմակերպությունն իր շահառուներին և հասարակությանն առավել հայտնի է որպես ՓԻՆԲ Արմենիա, որը կազմակերպության անվան անգլերեն տարբերակի հապավումն է: Այն մի քանի ակտիվ երիտասարդների նախաձեռնությունն է, որոնք նպատակ ունենին ստեղծել մի կազմակերպություն, որը կնպաստեր հասարակության մեջ անվտանգ սեռական հարաբերությունների գաղափարի տարածմանը, ինչպես նաև զարկ կտար Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության գործընթացին: ՓԻՆԲ Արմենիան ԼԳԲՏ (լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր) համայնահեն կազմակերպություն է: Որպես այդպիսին՝ ՓԻՆԲ-ն իր վրա պատասխանատվություն է վերցրել խթանել Հայաստանում ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանության գործընթացը:

Կազմակերպության գործունեության առաջին իսկ օրվանից ՓԻՆԲ-ը նախաձեռնել և իրականացրել է տարբեր միջոցառումներ և ծրագրեր՝ նպատակ ունենալով բարձրացնել հասարակության իրազեկվածությունը սեռական և վերարտադրողական առողջության և իրավունքների, սեռական ճանապարհով փոխանցվող վարակների և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին, ինչպես նաև խթանել անվտանգ սեռական հարաբերություններ ու վարքագիծ: Հետագայում կազմակերպության գործունեության ոլորտն էլ ավելի ընդլայնվեց. մարդու իրավունքները և գենդերային հիմնախնդիրները ևս ներառվեցին կազմակերպության օրակարգում:

Մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում կազմակերպությունը խրախուսում է հավասարության և խոցելի խմբերի ընդունման գաղափարները, ջանում է նվազեցնել ամեն տեսակի խտրականության արտահայտումը՝ հաստատելով մշակութային զգայունության և բազմազանության նկատմամբ հարգանքի միջավայր մեր հասարակությունում:

Զնայած իր երիտասարդ տարիքին, կազմակերպությանը հաջողվել է աչքի ընկնել իր թափանցիկ, բաց և նմիրյալ աշխատանքով: Այն հաստատել է կայուն համագործակցություն սեռական առողջության և մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում գործող տեղական և միջազգային կազմակերպությունների հետ:

ՓԻՆԲ-ի գրասենյակը տեղակայված է Երևանում, սակայն կազմակերպությունը տրամադրում է տարածքի և ժամանակի մեջ հասանելի ծառանություններ մեր օժանդակության և աջակցության կարիքն ունեցող բոլոր անհատների համար:



Կազմակերպության տեսլականը,  
առաքելությունն ու արժեքները

## Տեսլական

Ունենալ հասարակություն, որտեղ բոլոր մարդկանց իրավունքները պաշտպանված են, և յուրաքանչյուր ոք ընդունված է անկախ իր սեռական կողմնորոշումից, գենդերային ինքնությունից և/կամ գենդերային արտահայտումից:

## Առաքելություն

**Ստեղծել ապահով միջավայր ԼԳԲՏ անձանց համար՝ նրանց տրամադրելով իրավաբանական, հոգեբանական և սոցիալական պաշտպանվածություն և խթանելով նրանց բարեկեցությանը:**

ԼԳԲՏ անձանց իրավունքները ոտնահարվում են կյանքի գրեթե բոլոր ոլորտներում: Արժանապատվությունը նսեմացնող վերաբերմունքը, հոգեբանական և ֆիզիկական բռնությունը, ծառայությունների տրամադրման և շփման մերժումը այն վերաբերմունքն է, որին նրանք հանդիպում են իրենց առօրյա կյանքում: Այս առաքելությամբ մենք ցանկանում ենք հասնել ԼԳԲՏ անձանց ամբողջական պաշտպանությանը մեր հասարակությունում՝ ստեղծելով ապահով միջավայր համայնքի համար, հզորացնելով ԼԳԲՏ անձանց և ԼԳԲՏ համայնքի կարողությունները: Առանձնակի կարևորություն ունի ԼԳԲՏ համայնքի ներգրավումը հասարակություն՝ ջատագովելով համայնքի հետաքրքրությունները և կարիքները հասարակության մեջ, տրամադրելով սոցիալական, հոգեբանական, իրավական, առողջապահական և այլ ծառայություններ, ինչպես նաև զարգացնելով համագործակցությունը պետական և ոչ պետական ինստիտուտների հետ՝ ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակներում:

## **ՓԻՆՔ Արմենիայի արժեքներն են.**

բազմազանության, հավասարության, մարդասիրության ընկալում և ընդունում, սոցիալական արդարության և համաշխարհային արժեքների առաջնահերթություն,

մարդու հիմնարար իրավունքների նկատմամբ հարգանք և ճանաչում՝ մասնավորապես շեշտադրելով հավասարության և խտրականությունից զերծ մնալու յուրաքանչյուր անձի իրավունքը, ԼԳԲՏ համայնքի շրջանակներում և առհասարակ հայաստանյան հասարակությունում ակտիվ քաղաքացիության, մարդու իրավունքների և ժողովրդավարական արժեքների խթանում,

համերաշխություն խտրականության ենթարկված այլ մարդկանց և խմբերի միջև, ինչպես նաև քաղաքացիական հասարակության այն գործողությունների և շարժումների հետ, որոնք նպատակ ունեն մեր երկրում հաստատել ժողովրդավարություն:

## **Կազմակերպության կառուցվածքը**

Կազմակերպության բարձրագույն մարմինը ժողովն է, որը հրավիրվում է տարին մեկ անգամ կազմակերպության անդամների կողմից: Ժողովը երկու տարին մեկ անգամ ընտրում է կազմակերպության խորհրդի 5 անդամներին: Կազմակերպության խորհուրդը հաստատում է համակարգող նախագահի հաշվետվությունները, այդ թվում՝ ժողովին ներկայացվող հաշվետվությունը, ֆինանսական հաշվետվությունը, առաջարկություններ է ներկայացնում ժողովին՝ նրա բացառիկ իրավասությանը վերաբերող հարցերի վերաբերյալ, ընդունում է Կազմակերպության անդամ և ազատում կամ զրկում անդամությունից:

Կազմակերպության աշխատակազմը կազմակերպության գործունեությունն իրականացնող հիմնական մարմինն է. կազմակերպության կողմից իրականացվող ծրագրերը, մատուցվող ծառայությունները իրականացնում են աշխատակիցները:

ՓԻՆԲ Արմենիայի խորհուրդը կազմակերպության հիմնական ղեկավար մարմինն է: Խորհրդի պարտականությունների մեջ է մտնում քննարկել և սահմանել կազմակերպության առաջնահերթությունները, ընդգծել գործունեության հիմնական ուղղությունները և ռազմավարությունը՝ հաշվի առնելով կազմակերպության շահերը և տեսլականը: Կազմակերպության խորհուրդը հիմնականում պատասխանատվություն է կրում երկարաժամկետ պլանավորման, կազմակերպության բյուջեի ընդունման, ինչպես նաև միջոցների հավաքագրման գործունեության իրականացման համար: ՓԻՆԲ Արմենիայի խորհրդի կազմում ներգրավված են այն անձիք, որոնք իրենց առավելագույն ներդրումն են ունեցել տարիներ շարունակ կազմակերպության գործառնման մեջ:

Ներկայումս կազմակերպության խորհրդի կազմում ներգրավված են անձինք, որոնք ընտրվել են 2013թ-ին՝ 2 տարի ժամանակահատվածով:

### **Նվարդ Մարգարյան**

Նվարդ Մարգարյանը մասնագիտությամբ սոցիալական աշխատող է: Կազմակերպության գործունեության մեջ ներգրավված է 2008թ-ից՝ նախ որպես կամավոր, ապա 2010թ-ից աշխատել է որպես «Ինչպես դու» էլեկտրոնային պարբերականի խմբագիր: 2013թ-ից Նվարդը համակարգել է կազմակերպության մի շարք ծրագրեր, իսկ այնուհետև դարձել խորհրդի անդամ:

### **Յովհաննես Մադոյան**

Յովհաննես Մադոյանը «Իրական աշխարհ, իրական մարդիկ» ՀԿ-ի համահիմնադիրն է: Մասնագիտությամբ ընտանեկան բժիշկ է: Յովհաննես Մադոյանն առավել հայտնի է որպես ՄԻԱՎ/ԶԻԱԶ-ի հետ կապված խնդիրների փորձագետ և ջատագով: Յովհաննեսը Հայաստանում առաջիններից է, որ հանրային առողջապահության կարևորման գործընթացում բարձրացրել է ջատագովել է մարդու իրավունքների պաշտպանության նշանակությունն ու կարևորությունը:



## **Մարինե Մարգարյան**

Մարինե Մարգարյանը մասնագիտությամբ քաղաքագետ և միջազգայնագետ է: Մարինեն ներգրավված է եղել ՓԻՆՔ Արմենիայում կազմակերպության գործունեության առաջին օրվանից, եղել է կազմակերպության խիզախ կամավորներից մեկը, այնուհետև դարձել է ծրագրերի համակարգող, իսկ այժմ կազմակերպության խորհրդի անդամներից մեկն է: Մարինեն ներկայումս բնակվում է ԱՄՆ-ում, որտեղ լավագույնս ներկայացնում է կազմակերպության շահերը միջազգային մակարդակում:

## **Լարա Ահարոնյան**

Լարա Ահարոնյանը «Կանանց ռեսուրսային կենտրոն» Հայաստան ՀԿ-ի համահիմնադիրն է և ղեկավարը: Մասնագիտությամբ կրթական հոգեբան է: Լարան Հայաստանում և աշխարհում հատկապես հայտնի է որպես կանանց իրավունքների, կանանց շարժման առաջագծում պայքարող իրավապաշտպան: 2014թ-ին Լարա Ահարոնյանը պարգևատրվեց «Խիզախ կին» մրցանակով՝ կանանց իրավունքների և զենդեռային հավասարության խթանմանն ուղղված համարձակ պաշտպանության համար:

## **Մամիկոն Հովսեփյան**

Մամիկոն Հովսեփյանը ՓԻՆՔ Արմենիա ՀԿ-ի համահիմնադիրներից է և կազմակերպության խորհրդի անդամներից մեկը: Մասնագիտությամբ սոցիոլոգ է: Մամիկոնը ստացել է նաև մարդու իրավունքների և ժողովրդավարության մագիստրոսական կոչում: Հայաստանում առաջին իրավապաշտպաններից է, որը բարձրացրել է ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանության կարևորությունը և լծվել ԼԳԲՏ անձանց շահերի պաշտպանության և այն լավագույնս ներկայացնելու գործին:

## Կազմակերպության 2014թ. հիմնական աշխատակազմը

ՓԻՆՔ Արմենիայի աշխատակազմը բազմամասնագիտական թիմ է: Կազմակերպության աշխատակիցները շահառուներին տրամադրում են ժամանակի և տարածության մեջ հասանելի ծառայությունների ամբողջական փաթեթ:



### Նիկոլայ Յովհաննիսյան

Նիկոլայ Յովհաննիսյանը ՓԻՆՔ Արմենիայում ներգրավված է կազմակերպության գործունեության առաջին օրվանից: Մասնագիտությամբ իրավաբան է: Երկար տարիներ Կոլյան եղել է կազմակերպության նվիրված և ակտիվ կամավորներից մեկը: 2011թ-ից Կոլյան կազմակերպությունում աշխատում է որպես ծրագրերի օգնական:

### Լուսինե Ղազարյան

Լուսինե Ղազարյանը ՓԻՆՔ Արմենիայի իրավաբանն է: Լուսինեն ԶՀ Առողջապահության նախարարության ՋԻԱԶ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի էթիկայի կոմիտեի անդամ է, ինչպես նաև տվյալ կոմիտեի նախագահի տեղակալն է: Լուսինեն նաև Եվրոպայի խորհրդի Ատելության խոսքի դեմ պայքարի միջազգային շարժման կամավոր է:

### Յեղիմե Բաբայան

Յեղիմե Բաբայանը մասնագիտությամբ ռուսաստանագետ է և ՓԻՆՔ-ի գործունեության մեջ ներգրավված է 2013թ-ից: Կազմակերպությունում

Հեղինեն աշխատում է որպես «Ինչպես դու» այլընտրանքային ամսագրի խմբագիր, որի նպատակն է խթանել քաղաքացիների մասնակցությունը քաղաքացիական փոփոխություններին, քաղաքացիների պայքարին՝ հանուն անարդարության և անհավասարության: Հեղինեն Եվրոպայի խորհրդի երիտասարդ խաղաղության դեսպաններից մեկն է:

## **Էռնա Բալասանյան**

Էռնա Բալասանյանը ՓԻՆՔ Արմենիայի սոցիալական աշխատողն է: Կազմակերպությունում Էռնան աշխատում է 2013թ-ից: Էռնան համակարգում է կազմակերպությունում գործող «Տեղեկատվություն, կրթություն, հաղորդակցություն» կենտրոնի գործունեությունը, որտեղ այցելուները մասնակցում են դասընթացների և միջոցառումների, ստանում են խորհրդատվություն, ինչպես նաև կարող են օգտվել գրադարանից ու ստանալ ՀԿ-ի կողմից տրամադրվող այլ ծառայություններ:

## **Լիլիթ Ավետիսյան**

Լիլիթ Ավետիսյանը ՓԻՆՔ Արմենիայի հոգեբանն է: Երևանի պետական համալսարանում Լիլիթն ասպիրանտ է «Անձի հոգեբանություն» ամբիոնում: Լիլիթ Ավետիսյանը Հայաստանում այն եզակի հոգեբաններից է, որը LQFS հիմնահարցերի շուրջ տեսական հոգեբանական գիտելիքներ ունենալուց բացի, նաև աշխատում է այդ ոլորտում որպես հոգեբան:

## **Նելլի Առաքելյան**

Նելլի Առաքելյանը ՓԻՆՔ Արմենիայի կայքի ադմինիստրատորն է: Նելլին բավական երկար տարիներ ՀՀ-ում ակտիվ պայքար է մղել տարբեր քաղաքացիական շարժումների և նախաձեռնությունների շրջանակներում:

## **Մայա Քոչարյան**


Մայա Քոչարյանը ՓԻՆՔ Արմենիայում ներգրավված է որպես աուդիո աշխատողների համակարգող: Մեծ է հատկապես Մայայի դերը ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ի և այլ սեռավարակների կանխարգելման ծրագրերում:

## **Կամո Դավթյան**

Կամո Դավթյանը ՓԻՆՔ Արմենիայում ներգրավվել է որպես սեռական առողջության ծրագրերում աուդիո աշխատող և խորհրդատու: Հետագայում Կամոն դարձել է կազմակերպության ֆինանսական մենեջեր: Մասնագիտությամբ տնտեսագետ է:

«Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» ՀԿ-ի գործունեության գլխավոր շեշտադրումներից մեկը միշտ եղել և մնում է կամավորների հետ աշխատանքը: Յուրաքանչյուր տարի երեք տասնյակից ավել կամավորներ ներգրավվում են մեր կազմակերպության գործունեության մեջ: Կազմակերպության գործունեության յոթ տարիների ընթացքում կազմակերպությունում կամավորական գործունեություն են ծավալել ավելի քան 200 տեղական և 30 միջազգային կամավորներ աշխարհի այնպիսի հռչակավոր բուհերից, ինչպիսիք են Լոււնդի և Ուփսալայի համալսարանները (Շվեդիա), Դյուրհամի համալսարանը (Անգլիա), Դյուքի և Քոլումբիայի համալսարանները (ԱՄՆ), Սինգապուրի ազգային համալսարանը (Սինգապուր) և այլն, որոնք իրենց գիտելիքներն ու հմտություններն են ներդնում հանդուրժողականության, բազմազանության, հարգանքի և մարդու իրավունքների կենսագործման և զարգացման համար: Ավելին, ՓԻՆԲ Արմենիայի տեղական կամավորներն էլ Եվրոպական կամավորական ծրագրի շրջանակներում հնարավորություն են ստանում կամավորություն անել Եվրոպական տարբեր երկրներում, ինչպես նաև մասնակցել տարբեր դասընթացների և միջոցառումների:

Յուրաքանչյուր տարի ՓԻՆԲ Արմենիան Կամավորների միջազգային օրվա շրջանակներում (դեկտեմբերի 5) կազմակերպության կամավորների համար կազմակերպում է տարաբնույթ միջոցառումներ և քննարկումներ: Հանդիպումների և քննարկումների նպատակն է խթանել Հայաստանում կամավորությունը, նպաստել կամավորության մշակույթի զարգացմանը, ինչպես նաև խրախուսել առհասարակ կամավորական գործունեությունը, և, որ շատ կարևոր է, շնորհակալություն հայտնել կազմակերպության կամավորներին իրենց բացառիկ ներդրումների, գործունեության ու աջակցության համար:



## Շահառուներ, ծառայություններ և գործունեություն

ՓԻՆԲ Արմենիան իր առաքելությանն ու ռազմավարական ուղղություններին հասնելու նպատակով իրականացնում է հետևյալ գործունեությունը և իր շահառուներին տրամադրում է հետևյալ ծառայությունները.

### Կրթատեղեկատվական միջոցառումներ

- Դասընթացներ սեռական ճանապարհով փոխանցվող վարակների (ՍՃՓԿ) վերաբերյալ

- Սեմինարներ մարդու իրավունքների վերաբերյալ

- Դասընթացներ սեռականության թեմայով

- Քննարկումներ քաղաքացիական հասարակության զարգացման վերաբերյալ

- Սեմինարներ առաջնորդության և հաղորդակցության թեմայով

- Դասընթացներ համակցված անվտանգության վերաբերյալ

- Դասընթացներ ատելության խոսքի և ատելության հիմքով հանցագործությունների կանխարգելման մասին

### Խորհրդատվություն

- Սեռական առողջության և սեռական ճանապարհով փոխանցվող վարակների մասին խորհրդատվություն

- Սոցիալական աշխատողի աջակցություն

- Հոգեբանական խորհրդատվություն

- Իրավաբանական խորհրդատվություն

## Հանրային և սոցիալական միջոցառումներ

Սեռական առողջության վերաբերյալ հանրային և սոցիալական միջոցառումներ

Հանրային և սոցիալական միջոցառումներ՝ նվիրված մարդու իրավունքներին

Հանրային և սոցիալական միջոցառումներ՝ ուղղված  
ԼԳԲՏ-ֆոբիայի նվազեցմանը

Հանրային և սոցիալական միջոցառումներ՝ նվիրված կանանց իրավունքներին

Հանրային և սոցիալական միջոցառումներ՝ նվիրված ատելության խոսքի և ատելության հիմքով հանցագործությունների կանխարգելմանը

Հանրային և սոցիալական միջոցառումներ՝ նվիրված արժանապատվությունը նսեմացնող վերաբերմունքին (bullying), ԼԳԲՏ անձանց հանդեպ նման վերաբերմունքի կանխարգելմանը

Մշակութային միջոցառումներ

Կարողությունների զարգացում


Սեռական ճանապարհով փոխանցվող վարակների մասին կրթատեղեկատվական նյութերի պատրաստում և հրատարակում

Սեռականության մասին կրթատեղեկատվական նյութերի պատրաստում և հրատարակում

ԼԳԲՏԻ (ԼԳԲՏ և ինտերսեքս) հիմնահարցերի շուրջ հետազոտությունների իրականացում

Ֆիլմերի դիտումներ

Կամավորության, մարդու իրավունքների պաշտպանության և ակտիվ քաղաքացիության խթանում



## **Սեռական ճանապարհով փոխանցվող վարակների կանխարգելում**

Պահպանականների, լուրբիկանտների և կրթատեղեկատվական նյութերի տրամադրում՝ ՍՃՓՎ կանխարգելման նպատակով ՍՃՓՎ-ների նկատմամբ անվճար և անանուն հետազոտության կազմակերպում

Աուրիչ աշխատանք՝ սեռական առողջության ծրագրերում նոր մարդկանց ներգրավելու համար

## **Իրավունքների պաշտպանություն և ջատագովություն (աղվոկացիա)**

Սեռավարակների և ՁԻԱՀ-ի խնդրի ջատագովություն

ԼԳԲՏԻ անձանց իրավունքների ջատագովություն

Իրավաբանական ծառայություններ ՄԻԱՎ-ի նկատմամբ առավել վտանգի ենթարկվող բնակչության համար

ՄԻԱՎ-ով ապրող անձանց իրավունքների պաշտպանություն և ջատագովություն

Սուր և խրոնիկ ցավեր ունեցող անձանց խնդիրների ջատագովություն

«Ընտանեկան բռնության կանխարգելման մասին» օրենքի ջատագովություն

«Խտրականության դեմ» օրենքի ջատագովություն

Տարեկան զեկույցների պատրաստում

Այլընտրանքային զեկույցների տրամադրում պետական մարմիններին և միջազգային կազմակերպություններին




Ռազմավարական դատավարություն

Նամակների, հայցադիմումների և այլ անհրաժեշտ փաստաթղթերի պատրաստում

Կազմակերպության շահառուների շահերի պաշտպանություն պետական և ոչ պետական ինստիտուտներում

Դատական գործերի մշտադիտարկում

«Հանրային տեղեկատվություն և գիտելիքի  
կարիք» ՀԿ-ի կողմից իրականացված  
հիմնական ծրագրերը 2007-2014թթ.





## **Սեռական ճանապարհով փոխանցվող վարակների կանխարգելում**

*Տևողությունը՝ 2007թ-ից մինչ այժմ*

2007թ-ից սկսած «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» ՀԿ-ն, նպատակ ունենալով կանխարգելել սեռական ճանապարհով փոխանցվող վարակները երիտասարդության շրջանում, իրականացնում է սույն ծրագիրը: Ծրագիրը իր մեջ ներառում է մի շարք բաղադրիչներ.

երիտասարդների և SUS-ների (տղամարդ, ով սեռական հարաբերություն է ունենում տղամարդկանց հետ) շրջանում սեռական առողջության վերաբերյալ իրազեկվածության բարձրացում՝ հավասարակիցների ուսուցման մեթոդով, սեռական առողջության վերաբերյալ դասընթացների անցկացում երևանում և ՀՀ մարզերում,

սեռական առողջության և, մասնավորապես, սեռական ճանապարհով փոխանցվող վարակների մասին տեղեկատվության տարածում տեղեկատվական թերթիկների, պաստառների, հանրային միջոցառումների միջոցով,

սեռական առողջության վերաբերյալ ամանուն և գաղտնի խորհրդատվության տրամադրում,

պահպանակների, լուբրիկանտների և կրթատեղեկատվական նյութերի անվճար տրամադրում սեռական ճանապարհով փոխանցվող վարակների կանխարգելման նպատակով, ՍՃՓՎ-ների և ՄԻԱՎ-ի նկատմամբ անվճար և անանուն հետազոտության կազմակերպում,

հանրային միջոցառումների կազմակերպում՝ սեռական առողջության և մարդու իրավունքների վերաբերյալ հասարակության իրազեկման նպատակով,

աուքթիվ աշխատանք՝ սեռական առողջության ծրագրերում նոր մարդկանց ներգրավելու համար:

Ծրագրի շրջանակներում բաժանվել է ավելի քան 70.000 պահպանակ, մոտ 600 մարդ անցել է ԿԽՀ (կամավոր խորհրդատվություն և հետազոտություն), որոնցից բուժման կարիք ունեցողները ստացել են համապատասխան բուժում: Գրեթե 4500 մարդ ստացել է կրթատեղեկատվական նյութեր և մասնակցել է դասընթացների:

Նպատակ ունենալով հասնելու բազմազանության, փոխհարգանքի և մշակութային զգայունության՝ «Համրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» հասարակական կազմակերպությունը իրականացրել է «Բազմազանություն» ծրագիրը՝ առաջադրելով հանդուրժողականության, հարգանքի և հավասարության գաղափարները: Այս ծրագրի շրջանակներում գործողություններն ու միջոցառումներն ուղղված են եղել մարդու իրավունքների առաջաջմանն ու ավելի համընդգրկուն ընկալմանը և՛ որպես տեսություն, և՛ որպես գործնական երևույթ՝ կիրառելի առօրյա կյանքում, իրականության մեջ տարբեր իրադրություններում, ինչպես նաև չարաշահումների, խախտումների և դրանք զեկուցելու և այլ նպատակների համար: Այս ծրագիրն ի սկզբանե նպատակ է հետապնդել առաջ բերել դրական փոփոխություններ, սնել և տարածել հավասարության, քաղաքացիական հասարակության գաղափարները, ինչպես նաև պայքարել բացասական տաբուների, կարծրատիպերի դեմ և հասարակությունում չեզոքացնել խտրական մոտեցումները:

«Բազմազանություն» ծրագրի շրջանակներում Երևանում և Հայաստանի բոլոր մարզերում կազմակերպության դասընթացավարները իրականացրել են «Գիտելիք և իրավունք» դասընթացը: «Գիտելիք և իրավունքը» երկօրյա դասընթաց է Երևանի և Հայաստանի մարզերի երիտասարդության համար, որի նպատակն է համախմբել երիտասարդներին այնպիսի արժեքների շուրջ, ինչպիսիք են մշակութային բազմազանությունը, հարգանքը հասարակության տարբեր խմբերի և նրանց իրավունքների նկատմամբ: Դասընթացի ընթացքում երիտասարդները ոչ ֆորմալ կրթության մեթոդների միջոցով ծանոթանում են կարծրատիպերի, նախապաշարմունքների, խտրականության, հանդուրժողականության, մարդու իրավունքների և ժողովրդավարության հիմնական սկզբունքներին, ստանում են հիմնարար գիտելիք, որը խթան է քննադատական վերլուծական մտածելակերպի զարգացման համար: Երևանում և Հայաստանի այլ 17 քաղաքներում ընդհանուր թվով իրականացվել է 30 դասընթաց, որին մասնակցել են ընդհանուր առմամբ 680 երիտասարդ:

«Գիտելիք և իրավունք» երկօրյա դասընթացին լիարժեք մասնակցություն ցուցաբերած երիտասարդների համար, որոնք մոտիվացված են ստանալու վերոնշյալ թեմաների մասին առավել խորացված

գիտելիքներ և կիրառելու այդ գիտելիքները իրենց համայնքների զարգացման համար, կազմակերպվում է «Գեյթ»՝ «Գենդեր, ակտիվիզմ, հանդուրժողականություն, հավասարություն» ճամբարը (GATE ճամբարը): Այն համախմբում է Հայաստանի համայնքների մոտիվացված երիտասարդներին՝ խթանելու Հայաստանում սեռականության և գենդերային հարցերի շուրջ ակտիվիզմը: Ծամբարի ընթացքում ավելի խորությամբ ուսումնասիրվում են գենդերային իրավահավասարություն, ֆեմինիզմ, սեռականություն, քաղաքացիական ակտիվիզմ, առաջնորդություն և այլ թեմաներ: Որպես արդյունք՝ մասնակիցները միասնաբար աշխատում են թեմատիկ տեսանյութերի, պաստառների ստեղծման և միջոցառումների կազմակերպման վրա: «Բազմազանություն» ծրագրի շրջանակներում Գեյթ ճամբարին մասնակցել են 60 երիտասարդ, որոնք հետագայում իրենց համայնքներում դարձան առաջնորդներ, ինչպես նաև հավասարը հավասարին ուսուցանողներ:



«Բազմազանություն» ծրագրի շրջանակներում մեկնարկեց «Ինչպես դու» էլեկտրոնային ամսագրի թողարկումը: «Ինչպես դու»-ն տեղեկատվության տարածման այլընտրանքային հարթակ է, որտեղ հրապարակվում են տարաբնույթ հոդվածներ այնպիսի թեմաների շուրջ, ինչպիսիք են քաղաքացիական հասարակությունը, մարդու իրավունքները, գենդերը, սեռական առողջությունը, սոցիալական արդարությունը. թեմաներ, որոնք դուրս են մնացել հիմնական մեդիայից և որոնց գրեթե անդրադարձ չի կատարվում: Ծրագրի

շրջանակներում, ընդհանուր առմամբ, 40 000 մարդ ծանոթացել է «Ինչպես դու» ամսագրի 7 համարներին, որոնք իրենց մեջ ներառում են մոտ 100 հոդված:

«Բազմազանություն» ծրագրի շրջանակներում պարբերաբար կազմակերպվել և իրականացվել է «Սեռականություն և սեռական առողջություն» երկօրյա դասընթացը, որը նպատակ ունի հետաքրքրված անձանց տեղեկատվություն փոխանցել սեռականության տարբեր բաղադրիչների (կենսաբանական սեռ, սեռական կողմնորոշում, սեռական և գենդերային ինքնություն և այլն), սեռական առողջության (սեռավարակներ, դրանց փոխանցման ուղիները և կանխարգելումը) մասին: Այս դասընթացին ընդհանուր առմամբ մասնակցել է 240 մարդ: Դասընթացներն իրականացվել են Երևան քաղաքում:

«Բազմազանություն» ծրագրի ավարտից հետո ծրագիրը շարունակվել է արդեն «Սոցիալական կրթություն և հզորացում» ծրագրով:



### **Իրավական կլինիկա առավել վտանգի ենթարկվող բնակչության համար**

*Տևողությունը 2011թ-ից մինչ այժմ*

ՄԻԱՎ վարակի համաճարակն այսօր վերաճել է գլոբալ ճգնաժամի և դարձել զարգացմանը խոչընդոտող հազարամյակի մարտահրավեր: Մարդու իրավունքների պաշտպանության հարցը ՄԻԱՎ-ի նկատմամբ առավել վտանգի ենթարկվող խմբերի (ներարկային թմրամիջոց օգտագործողներ, սեռա-

կան ծառայություններ տրամադրողներ, տղամարդկանց հետ սեռական հարաբերություն ունեցող տղամարդիկ) և ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց համար առանցքային և ռազմավարական նշանակություն ունի: Վերոնշյալ խմբերին պատկանող մարդիկ հիմնականում դուրս են մնում համապատասխան հանրային առողջապահության ծրագրերից, չեն ստանում աջակցություն և համապատասխան ծառայություններ:

Ավելին, ՀՀ-ում մարգինալացված այս խմբերը ենթարկվում են խտրականության և մարդու իրավունքների ոտնահարման հասարակական կյանքի գրեթե բոլոր ոլորտներում: Չնայած մեր հասարակությունում կան որոշակի կազմակերպություններ և ինստիտուտներ, որոնք

փորձում են զբաղվել տվյալ մարզին ալացված խմբերի՝ մարդու իրավունքների պաշտպանությամբ, սակայն ոլորտում բացակայում է համակարգվածությունը, ինչպես նաև ծառայությունները հաճախ հասցեական և կոնկրետացված չեն, ինչի առկայությունը հնարավորություն կտար լուծել այս խմբերին անհանգստացնող հիմնախնդիրները: Խարանն ու խտրականությունը, հասարակության անհանդուրժող վերաբերմունքը այս մարդկանց նկատմամբ ոչ միայն մարդու իրավունքների ոտնահարման հիմք է ստեղծում, այլ նաև խոչընդոտում է նրանց ներգրավվածությամբ հանրային առողջության, ՄԻԱՎ-ի կանխարգելման, խնամքի և բուժման ծրագրերում և ծառայություններում:

ՄԻԱՎ-ի նկատմամբ խոցելի այս խմբերի և ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց իրավունքների ոտնահարումները հիմնականում երկու աղբյուրներ ունեն: Առաջինը պայմանավորված է պետական օրենքների մեջ առկա բացերով և թերություններով, իսկ մյուսը՝ հասարակական նախապաշարմունքներն ու, այսպես կոչված, ավանդական վերաբերմունքն է ՄԻԱՎ-ի նկատմամբ խոցելի բնակչության հանդեպ: Այս հիմնախնդիրները, իրականում, մնում են չբարձրաձայնված, փակ դռների հետևում և հանրային ուշադրության չեն արժանանում:

Անհանգստացած այս խնդիրներով, ինչպես նաև մարդու իրավունքների ոտնահարման բազմաթիվ դեպքերով և հասցեական ծառայությունների տրամադրման մատչելիությամբ՝ «Իրական աշխարհ, իրական մարդիկ» և «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» հասարակական կազմակերպությունները 2011թ. հուլիս ամսից համատեղ սկսել են իրականացնել «Իրավական կլինիկա առավել վտանգի ենթարկված բնակչության համար» ծրագիրը:

Ծրագրի համաձայն, կազմակերպությունները նպատակ են հետապնդում համակարգված, նպատակաուղղված և կոմպետենտ իրավական ծառայությունների տրամադրման միջոցով ընդլայնել առավել վտանգի ենթարկված բնակչության ներգրավումը ՄԻԱՎ-ի կանխարգելման ծրագրերում: Կազմակերպություններն այս ծրագրի իրականացմամբ նպատակ են հետապնդում նաև արդար, հասարակական և ռազմավարական դատավարության միջոցով ստեղծել հիմքեր քաղաքականության, օրենքների և առկա պրակտիկայի փոփոխման ջատագովության համար:

«Իրավական կլինիկա առավել վտանգի ենթարկված բնակչության համար» ծրագրի շրջանակներում կազմակերպությունները ծրագրի շահառու հանդիսացող չորս հիմնական խմբերին պատկանող մարդկանց՝ ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ, թմրամիջոց օգտագործողներ, սեռա-

կան ծառայություններ տրամադրողներ և տղամարդիկ, որոնք սեռական հարաբերություն են ունենում տղամարդկանց հետ, տրամադրում են ժամանակի և աշխարհագրական առումով հասանելի հետևյալ ծառայությունները՝

իրավաբանական խորհրդատվություն,

դիմումների, հայցադիմումների և այլ անհրաժեշտ փաստաթղթերի կազմում,

այցելություն ոստիկանության բաժին, եթե շահառուին հանիրավի ձերբակալել են կամ բերման ենթարկել,

շահերի պաշտպանություն պետական և ոչ պետական մարմիններում,

ներկայացուցչություն դատարաններում քաղաքացիական և քրեական գործերով (որոշ դեպքերում),

մարդու իրավունքների մասին տեղեկատվության տրամադրում:

Սույն ծրագրի շրջականակներում 2011-2014թթ-ի ընթացքում ծառայություններից օգտվել են մոտ 200 մարդ այնպիսի խոցելի խմբերից, ինչպիսիք են LQFS անձինք (82 հոգի), ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ (65 հոգի), սեռական ծառայություն տրամադրող կանայք (20 հոգի), ներարկային թմրամիջոց օգտագործողներ (23 հոգի), ինչպես նաև մարդիկ, որոնք ունեն պալեստինյան խնամքի կարիք (10 հոգի): 200 գործերից 4-ի մասով կազմակերպությունը սկսել և իրականացնում է ռազմավարական դատավարություններ:

### ***Ռազմավարական դատավարություններ***

Իրավական կլինիկա ծրագրի շրջանակներում կազմակերպությունը իրականացնում է նաև հատուկ ընտրված դեպքերի ռազմավարական դատավարություն, որը հնարավորություն է տալիս տվյալ ընտրված գործերը, դատարաններում վիճարկելով, զգալիորեն բարեփոխել օրենսդրությունը, պրակտիկան կամ բարձրացնել հանրային իրազեկվածության մակարդակը այս կամ այն խնդրի շուրջ: Չնայած այն հանգամանքին, որ ռազմավարական գործի հիմնական նպատակը կոնկրետ անձի բողոքի ներկայացումն է դատական ատյաններում, այնուամենայնիվ, այն նաև միտված է մարդկանց մի ամբողջ խմբի համար արդարադատության իրականացման ապահովմանը, որոնք կարող են հայտնվել մնամատիպ կամ համեմատելի իրավիճակներում: Ավելին, ռազմավարական դատավարությունը իրավական գործի է, որը թույլ է տալիս մարդու իրավունքների խախտման անհատական

գործի վիճարկման միջոցով հասնել սոցիալական, իրավական և քաղաքական փոփոխության՝ դրանով իսկ ստեղծելով դատական մախաղեպեր:

2011-2014թթ-ի ընթացքում կազմակերպությունն ունեցել է ռազմավարական դատավարության 4 դեպք, որոնցից երկուսն արդեն Մարդու իրավունքների եվրոպական դատարանում են: Այս չորս դեպքերից մեկի հիմքում սեռական կողմնորոշման և գենդերային ինքնությունով պայմանավարված ատելության հիմքով հանցագործություններն են: Մյուս երեք դեպքերն առնչվում են ատելության կոչերին և բռնության քարոզչությանը: Այդ դեպքերը մախաղեպային են, քանի որ ատելության կոչեր տարածող տեքստերում սահմանազատում է դրվում ատելության խոսքի և խոսքի ազատության հայեցակարգերի միջև: Դեռ ավելին, շատ դեպքերում թե՛ ատելության կոչեր տարածողները, թե՛ հասարակությունն ընդհանրապես չեն գիտակցում դրա անօրինականությունն ու հնարավոր հետևանքները: Խնդիրն այն է, որ ՀՀ օրենսդրությունը չի մախատեսում ատելության կոչերն ընդհանրապես սահմանող, կամ նմանատիպ դեպքերի համար պատասխանատվություն մախատեսող որևէ իրավական ակտ: Այսինքն, ատելության խոսքը (hate speech) որպես այդպիսին չի սահմանվում, ուստի և չի արգելվում ՀՀ օրենսդրությամբ, ինչն էլ նպաստում է նմանատիպ անօրինական գործողությունների շարունակական անպատժելիությանը:

### ***Ֆոգա և փոխիր. այժմ առավել, քան երբևէ***

Մարդու իրավունքներն անքակտելիորեն կապված են ՄԻԱՎ-ի կանխարգելման հետ և ուղղակի ձևով ազդում են ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց կյանքի որակի վրա:



Մարդու իրավունքների հանդեպ հարգանքի պակասը նպաստում է համաճարակի տարածմանը, մինչդեռ ՄԻԱՎ-ը կանխում է մարդու իրավունքների պաշտպանության առաջընթացը և պաշտպանությունը: Ակնհայտ է, որ համաճարակի տարածումն ավելի մեծ խնդիր է զարգացող երկրներում, որտեղ հիվանդությունը մարդկային զարգացման կենսական նշանակության ձեռքբերումներին սպառնում է հետընթացով: Մարդու իրավունքների պաշտպանությունը, հետևաբար, հույժ կարևոր է ՄԻԱՎ-ի տարածումը կանխելու գործում: Մարդու իրավունքների պաշտպանությունը նաև մեղմացնում է համաճարակի



թողած ազդեցությունը հասարակական և տնտեսական ոլորտների վրա: Ուստի համաճարակի դեմ արդյունավետ պայքարը պետք է հիմնված լինի բոլոր քաղաքացիական, մշակութային, տնտեսական, քաղաքական և հասարակական իրավունքների համդեպ հարգանքի վրա: Սույն ծրագրի շրջանակներում դեկտեմբերի 1-ին համալսարանների հարակից տարածքներում իրականացվել է երթ, որի ընթացքում երթի մասնակիցներն անցորդներին բաժանել են ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի կանխարգելման վերաբերյալ տեղեկատվական նյութեր և թռուցիկներ: Սույն ծրագրի շրջանակներում իրականացվել է նաև «ՄԻԱՎ/ՁԻԱՅ և մարդու իրավունքներ» դասընթացը, որին մասնակցել են Երևանի 6 համալսարանների ավելի քան 170 ուսանող: «Հոգա և փոխիր» ծրագրի շրջանակներում 12 լրագրողների տրամադրվել է տեղեկատվություն՝ թե ինչու մարդու իրավունքների պաշտպանությունը պետք է զբաղեցնի կենտրոնական դեր ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի կանխարգելման գործընթացում, ինչպես պետք է լուսաբանել ՄԻԱՎ-ի նկատմամբ խոցելի բնակչության վերաբերյալ նյութերը, ինչ դեր ունեն լրագրողները վերոնշյալ հիմնահարցերի շուրջ հանրային կարծիքի ձևավորման գործընթացում և թե ինչպես են նրանք իրենց աշխատանքի միջոցով ազդում Հայաստանում ՄԻԱՎ-ի կանխարգելման գործընթացի վրա: Դասընթացներից հետո տարբեր հեռուստաընկերություններում և օնլայն հարթակներում կազմակերպվել են թոք շոուներ, բանավեճեր, ինչպես նաև կրթատեղեկատվական հաղորդաշարեր: Դասընթացներ են կազմակերպվել նաև Հայաստանում ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի հիմնահարցերով զբաղվող ակտիվիստների համար՝ «ՄԻԱՎ/ՁԻԱՅ և մարդու իրավունքներ այժմ առավել, քան երբևէ» Հռչակագրի շուրջ, ինչպես նաև ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի հիմնահարցերի ջատագովության շրջանակներում մարդու իրավունքների պաշտպանության անհրաժեշտության մասին, որին ընդհանուր թվով մասնակցել են 28 ակտիվիստներ: 2011թ-ին ՁԻԱՅ-ի դեմ պայքարի համաշխարհային օրվա շրջանակներում կազմակերպվել է նաև «ՁԻԱՅ-ի խնդրի ջատագով» մրցանակաբաշխությունը: Մրցանակներ են տրվել ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի խնդրի ջատագովության 6 անվանակարգում՝ ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի կանխարգելման և մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում կարկառուն գործունեության համար. հանրային գործիչ միջազգային կազմակերպություն, տեղական հասարակական կազմակերպություն, պետական կառույց, լրագրող և մշակութային գործիչ: Իսկ Մարդու իրավունքների օրվա շրջանակներում մեկնարկել է «Գործիր» շրջիկ ցուցահանդեսը՝ երիտասարդների մասնակցությամբ: Ցուցահանդեսը անց է կացվել Երևան, Վանաձոր և Գյումրի քաղաքներում, իսկ Ժյուրիի ընտրած նկարներով պաստառներ են պատրաստվել:



## Սոցիալական հզորացում և կրթություն

*Տևողությունը՝ 2013թ-ից մինչ այժմ*

2013թ-ից «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» ՀԿ-ն սկսել է իրականացնել «Սոցիալական հզորացում և կրթություն» ծրագիրը, որը «Բազմազանություն» ծրագրի շարունակությունն է: Ծրագիրը նպատակ ունի զարգացնել և համախմբել քաղաքացիական ակտիվիզմը Հայաստանում՝ հզորացնելով քաղաքացիական ակտիվիստներին և համայնքային առաջնորդներին՝ ոչ խտրական մոտեցման, ժողովրդավարության հաջող և իրատեսական աճի համար:

Սույն ծրագրի շրջանակներում կազմակերպությունը հնարավորություն ունեցավ իր կողմից մատուցվող ծառայությունները համալրել սոցիալական աշխատողի և հոգեբանի ծառայություններով: Այսպիսով, 2013թ-ից ի վեր կազմարպությանը հաջողվել է իր շահառուներին տրամադրել ծառայությունների ամբողջական փաթեթ, որի պատասխանատուներն են միջմասնագիտական թիմի պրոֆեսիոնալ աշխատակիցները: Իսկ արդյունքները իրենց սպասեցնել չտվեցին: Մեկ տարվա ընթացքում կազմակերպության հոգեբանն իրականացրել է 137 անհատական խորհրդատվական հանդիպում, 27 խմբային հանդիպում, ինչպես նաև տարբեր խմբային աշխատանքներ է վարել: Իսկ սոցիալական աշխատողի մատուցած անհատական ծառայությունից օգտվել է 20 մարդ: Ավելին, սոցիալական աշխատողը ամեն շաբաթ LQPS համայնքի ներկայացուցիչների համար կազմակերպել տարբեր թեմատիկ քննարկումներ, դասընթացներ, սեմինարներ, ֆիլմերի դիտումներ և այլն, որոնց մասնակցել է մոտ 300 մարդ: «Սոցիալական հզորացում և կրթություն» ծրագրի շրջանակներում Երևանում և Հայաստանի այլ մարզերում իրականացվում է «Սոցիալական արդարությունը սկսվում է քեզանից» դասընթացը, որի նպատակն է միավորել երիտասարդներին այնպիսի թեմաների շուրջ, ինչպիսիք են



սոցիալական արդարությունը և յուրաքանչյուրի դերն սոցիալական արդարությանը հասնելու գործում: 2014թ-ի ընթացքում դասընթացն իրականացվել է 10 անգամ՝ Երևանում (5 անգամ) և 5 մարզում, որին մասնակցել են 135 երիտասարդ: «Սոցիալական արդարությունը սկսվում է քեզանից» դասընթացի ընթացքում առավել մոտիվացված և հետաքրքրված երիտասարդները ևս հնարավորություն են ունենում մասնակցել արդեն ավանդույթ դարձած «Գեյթ» ծամբարին: 2014թ-ի ընթացքում կազմակերպությունը կազմակերպել է 1 Գեյթ ծամբար, որին մասնակցել են 20 երիտասարդ Երևանից և 5 մարզերից: Ծրագրի շրջանակներում շարունակվել է նաև «Ինչպես դու» ամսագրի թողարկումը, որը 2014թ-ին հրապարակվել է 4 անգամ և ունեցել է 14000 դիտում:

Սույն ծրագրի շրջանակներում նաև կազմակերպությունն աշխատում է լրագրողների և քաղաքացիական ակտիվիստների հետ՝ նրանց հետ քննարկելով հանդուրժողականության, սեռականության և գենդերային հիմնախնդիրները: Ինչպես նաև տարբեր հետաքրքրված անձանց, շահառուների, քաղաքացիական ակտիվիստների համար կազմակերպությունը կազմակերպում և իրականացնում է տարբեր թեմաներով դասախոսություններ և քննարկումներ՝ որպես բանախոսներ հրավիրելով տարբեր փորձագետների:



## ԼԳԲՏ ամիս

*Տևողությունը՝ 2012թ ապրիլ-մայիս*

«ԼԳԲՏ ամիս» ծրագրի շրջանակներում ՓԻՆԲ Արմենիան իրականացրել է տարբեր միջոցառումներ և գործողություններ՝ նպատակ ունենալով խթանել ԼԳԲՏ անձնանց իրավունքների պաշտպանությունը՝ երկխոսության մեջ ներգրավելով երիտասարդներին, մեդիայի ներկայացուցիչներին, ինչպես նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին: «ԼԳԲՏ ամիս» ծրագրի շրջանակներում մենք կազմակերպել ենք 3 քննարկում ուսանողների հետ՝ հոմոֆոբիայի և հանդուրժողականու-

թյան մասին, որին մասնակցել են ավելի քան 60 ուսանող: Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, ինչպես նաև մեդիա ներկայացուցիչների համար կազմակերպվել և իրականացվել է երկօրյա դասընթացներ՝ սեռականության և ԼԳԲՏ իրավունքների թեմայով: Կազմակերպությունը հրատարակել է հոմոֆոբիայի մասին բուկլետ, որը բաժանվել է տարբեր համայնքի միջոցառումների, կոնֆերանսների, հանդիպումների ընթացքում (600 օրինակ): «Լճության օրվա» շրջանակներում կազմակերպությունը պատրաստել և տարածել է բացիկներ, որոնք ԼԳԲՏ անձանց իրավունքների ոտնահարումները դարձնում են առավել տեսանելի: Ավելին, «Լճության օրը» ՓԻՆԲ-ը կազմակերպել է մամուլի ասուլիս, որի ընթացքում առաջին անգամ հանրայնորեն ՅԿ-ի երկու ներկայացուցիչները խոսել են կրթական հաստատություններում ԼԳԲՏ անձանց նկատմամբ բռնությունների և արժանապատվությունը նսեմացնող վերաբերմունքի մասին:

Մայիսին կազմակերպությունը կազմակերպել և հաջողությամբ իրականացրել է «ԼԳԲՏ իրավունքները Յայաստանում. լռեցված իրականություն» կոնֆերանսը՝ քննարկելու ԼԳԲՏ անձանց իրավունքների իրադրությունը Յայաստանում: Կոնֆերանսին մասնակցել են տարբեր պետական ոլորտի ներկայացուցիչներ, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, դեսպանատան ներկայացուցիչներ, տեղական հասարակական կազմակերպությունների անդամներ, քաղաքացիական ակտիվիստներ և ԼԳԲՏ համայնքի հետաքրքրված ներկայացուցիչներ: Մայիսի 17-ին՝ Հոմոֆոբիայի և տրանսֆոբիայի դեմ պայքարի համաշխարհային օրվա շրջանակներում կազմակերպությունը իրականացրեց «Ես հոմոֆոբ չեմ» ակցիան՝ Երևան քաղաքի փողոցներում բաժանելով հոմոֆոբիայի մասին տեղեկատվական նյութեր, ինչպես նաև «Ես հոմոֆոբ չեմ» խորագրով գրիչներ (300 հատ): 2012թ-ի մայիսի 21-ին կազմակերպությունը ծրագրել էր իրականացնել «Բազմազանության» երթը, որի ընթացքում կազմակերպության ներկայացուցիչները, ինչպես նաև քաղաքացիական հասարակության այլ ակտիվիստներ (մոտ 30) հոգի, որոնք դուրս էին եկել փողոց՝ տոնելու մեր երկրում առկա մշակութային բազմազանությունը, ենթարկվեցին մոտ 200՝ ագրեսիվ տրամադրված ազգայնամուլների հարձակմանը, ինչը խափանեց ինչպես երթի բնականոն ընթացքը, այնպես էլ նախապես պլանավորված «(Ան)Նման» ցուցահանդեսը: Մինչ այսօր այդ հարձակման կազմակերպիչներից ոչ ոք պատասխանատվություն չի կրել՝ հարձակումը կազմակերպելու և իրականացնելու համար: Ավելին, այդ միջադեպը դարձավ հասարակական հոմոֆոբ տրամադրությունների աճի հիմնական չափորոշիչը: «Բազմազանություն» խորագիրը

կրող երթի վրա ազգայնամոլ խմբի հարձակումը արդարացրին և օրհնեցին Հայ Առաքելական եկեղեցու սպասավորները, բազմաթիվ պատգամավորներ և պետական համակարգի ներկայացուցիչներ հանդես եկան հայտարարություններով՝ իրենց ելույթներում արդարացնելով երթի խաղաղ մասնակիցների վրա հարձակումը:



## **Հայաստանում հակախտրական օրենսդրության ջատագովություն**

*Տևողությունը՝ 2012թ. սեպտեմբեր-դեկտեմբեր*

2012թ-ին՝ DIY ակումբի պայթեցումից և «Բազմազանության» երթի վրա հարձակումից հետո, ինչպես նաև այդ դեպքերի արդյունքում ԼԳԲՏ անձնաց նկատմամբ ձևավորված հասարակական անհանդուրժողականության, մանսօրինակ դեպքերի շուրջ անպատժելիության մթնոլորտի ձևավորման արդյունքում կազմակերպության օրակարգ մտավ հակախտրական օրենսդրություն ունենալու անհրաժեշտության ջատագովության հարցը: Կազմակերպությունն այլ քաղաքացիական հասարակության խմբերի, հասարակական կազմակերպությունների շրջանում, որոնք ևս աշխատում են խոցելի խմբերի, ինչպես նաև խտրականության դեմ պայքարի հարցերով, սկսեց իրականացնել տարաբնույթ հանդիպումներ՝ քննարկելու հակախտրական օրենսդրության անհրաժեշտությունը: Այդ հանդիպումների արդյունքում ձևավորվեցին տարբեր աշխատանքային խմբեր, որոնք վերլուծեցին խտրականության դեմ պայքարի միջազգային պրակտիկան, ինչպես նաև օրենսդրական վերլուծության ընթացքում հիմնավորեցին խտրականության հարցերը կարգավորող առանձին օրենսդրություն ունենալու անհրաժեշտությունը: Չնայած այն հանգամանքին, որ սույն ծրագիրը տևել է ընդամենը 4 ամիս, այնուամենայնիվ խտրականության դեմ պայքարը, ինչպես նաև խտրականության հիմնահարցերը կարգավորող առանձին համապարփակ և համընդգրկուն օրենսդրության ջատագովության հիմնահարցերը մինչ օրս կազմակերպության գործունեության կիզակետում են:

## **ԼԳՔՏ անձանց իրավունքների իրադրության հզորացում Հարավային Կովկասում**

*Տևողությունը՝ 2012-2013թթ.*

«ԼԳՔՏ անձանց իրավունքների իրադրության հզորացում Հարավային Կովկասում» ծրագրի իրականացման նպատակն է եղել բարձրացնել ԼԳՔՏ անձանց իրավունքների պաշտպանվածության մակարդակը՝ շարժման մեջ ներգրավելով հետերոսեքսուալ անձանց Հայաստանում, Վրաստանում և Ադրբեյջանում: Ծրագրի իրականացման առաջին փուլում ծրագրի մասնակից գործընկեր կազմակերպություններն իրականացրել են ԼԳՔՏ անձանց իրավունքների շուրջ մոնիթորինգ իրենց երկրներում՝ պարզելու ԼԳՔՏ անձանց իրավունքների իրադրությունը, ինչպես նաև իրավունքների ոտնահարումների դեպքերի տարածվածությունը կոնկրետ ոլորտներում և ինստիտուտներում՝ կրթություն, զբաղվածություն, առողջապահություն, զինված ուժեր, ոստիկանություն և այլն: Ուսումնասիրության ընթացքում հավաքված տեղեկատվության վերլուծության արդյունքում ամեն երկրի մասնակից կազմակերպություն առանձնացրել է կոնկրետ ոլորտներ, որտեղ տարբեր ծրագրերի իրականացման միջոցով, փորձել է նվազեցնել իրավունքների ոտնահարումների դեպքերը, ինչպես նաև խթանել հանդուրժողականության մթնոլորտի ձևավորմանը տվյալ՝ ընտրված ոլորտում: ՓԻՆՔ Արմենիան հետազոտության տվյալների վերլուծության արդյունքում կանգ առավ կրթության ոլորտի վրա, որի շրջանակներում իրականացրեց արշավներ, որոնք միտված էին կրթական հաստատություններում ԼԳՔՏ անձանց նկատմամբ խտրականության, ինչպես նաև արժանապատվությունը նսեմացնող վերաբերմունքի նվազեցմանը: Կազմակերպությունը սույն ծրագրի շրջանակներում 2013թ-ին իրականացրեց «Լռության օր» միջոցառումը, որի շրջանակներում Ֆեյսբուք սոցիալական ցանցում ստեղծվեց «Լռության օր» խումբը: «Լռության օրը» կազմակերպվեց մամուլի ասուլիս, որը լուսաբանեց 10 լրատվամիջոց՝ ընդհանուր առմամբ ունենալով 800.000 դիտում: Կրթական հաստատություններում նվաստացումների և բռնությունների կանխարգելման նպատակով կազմակերպության կամավորները և աշխատակիցները համատեղ նկարահանել են երկու սոցիալական հոլովակ, որոնք բավական հաջողված են, իսկ դրանցից մեկը՝ ներկայացվել է նաև տարբեր մրցույթների («Մեկ կադր, մեկ րոպե» կինոփառատոն, ՄԱԿ-ի կազմակերպած մարդու իրավունքների մասին տեսահոլովակների մրցույթ և այլն):

## Մենք և մեր իրավունքները

*Տևողությունը՝ 2009-2011թթ.*

«Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» ՀԿ-ն իրականացրել է «Մենք և մեր իրավունքները» ծրագիրը, որի նպատակն էր հավաքագրել տեղեկատվություն Հայաստանում ԼԳՏ անձանց նկատմամբ խտրականության և իրավունքների ոտնահարման դեպքերի վերաբերյալ, ինչպես նաև պարզել՝ որքանով է ՀՀ օրենսդրությունը կարգավորում ԼԳՏ անձանց իրավունքների պաշտպանությունը և և նրանց պարտականությունները ԼԳՏ քաղաքացիների իրավունքների պաշտպանության գործում, ինչպես նաև ԼԳՏ իրավունքների պաշտպանության նպատակով մշակել առաջարկությունների փաթեթ: Ծրագիրը բաղկացած է եղել երկու փուլից: Առաջին փուլի ընթացքում անցկացվել է սոցիոլոգիական հետազոտություն ԼԳՏ համայնքի հետ՝ հասարակական կյանքի տարբեր ոլորտներում նրանց խնդիրների ու մարդու իրավունքների խախտումների բացահայտման նպատակով, ինչպես նաև ՀՀ օրենսդրական դաշտի և ԼԳՏ իրավունքների պաշտպանության համար առկա քաղաքականությունների համընդգրկուն իրավական և քաղաքական վերլուծություն:



Ծրագրի իրականացման երկրորդ փուլի ընթացքում կազմակերպությունն իրականացրել է ԼԳՏ անձանց հանդեպ հանրային վերաբերմունքի ուսումնասիրություն Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքներում: Ուսումնասիրության ընթացքում հավաքված տեղեկատվության արդյունքում մշակվել է առաջարկությունների փաթեթ, որը ներկայացվել է քննարկվել է ինչպես կառավարության աշխատակիցների, այնպես էլ այլ շահագրգիռ կողմերի հետ:

Այս ծրագիրն իր բնույթով մորաբարական և պատմական նշանակություն ունի, քանի որ առաջին անգամ կառավարական, միջազգային և տեղական կառույցների ներկայացուցիչները մեկ հարթակում քննարկեցին ԼԳՏ իրավունքները, հանդես եկան իրենց հուզող հարցերով ու առաջարկներով:




## ԼԳՔՏ նշանակալի օրինակներ

*Տևողությունը՝ 2014թ հուլիս-նոյեմբեր*

Սույն ծրագրի նպատակն էր քննարկել հոմոֆոբիայի և հանդուրժողականության դիսկուրսները, ինչպես նաև հզորացնել ԼԳՔՏ համայնքը և համայնքի անդամներին՝ համագործակցություն ստեղծելով Վրաստանի և Հայաստանի ակտիվիստների միջև:

Ծրագրի իրականացման ընթացքում զանազան միջոցառումներ են կազմակերպվել ԼԳՔՏ անձանց համար՝ ինչպես պատրաստել ձեռագործ աշխատանքներ, ինչպես պատրաստել տրաֆարետներ, բակային արվեստի ատրիբուտներ, դասընթացներ և քննարկումներ «Քամինգ աութ»-ի մասին: Ծրագրի ընթացքում վրացի ակտիվիստների և գործընկերների մասնակցությամբ կազմակերպվել է նաև «ԼԳՔՏ իրավունքների իրադրությունը Հարավային Կովկասում», «Ինտերնալացված հոմոֆոբիան հայկական և վրացական ԼԳՔՏ համայնքում», «Հանրային տարածքներում ԼԳՔՏ շարժումների դերը և տեղը» և այլ թեմաներով քննարկումների շարք: Ընդհանուր առմամբ ծրագրին մասնակցել են ԼԳՔՏ համայնքի 132 ներկայացուցիչ և համախոհ:






## Հետազոտություններ, վերլուծություններ և այլընտրանքային զեկույցներ

ՓԻՆԲ Արմենիայի գործունեության կարևորագույն մասերից մեկն է համարվում հետազոտությունների նախաձեռնումն ու իրականացումը, տարբեր թեմաների շուրջ վերլուծությունների իրականացումը, ինչպես նաև մարդու իրավունքների միջազգային ցանցերին և կազմակերպություններին այլընտրանքային՝ ստվերային զեկույցների պատրաստումն ու ներկայացումը: Սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության մասին հայալեզու հետազոտություններ կարելի է ասել գրեթե չկային Հայաստանում մինչ «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» ՀԿ-ի գրանցումը: Կազմակերպության գործունեության առաջին իսկ տարիներից կազմակերպության աշխատակիցները նկատեցին, որ գործունեությունն առավել արդյունավետ և նպատակաուղղված դարձնելու համար մենք հենց նման հետազոտությունների կարիք ունենք, որոնց միջոցով հնարավոր կլինի հասկանալ հասարակությունում առկա խնդիրները, նրանց բնույթը, խնդիրների տարածվածությունը, այն կարծրատիպերն ու նախաաշարժումները, որոնք ընկած են ԼԳԲՏ անձանց նկատմամբ առկա խտրականության հիմքում: Ավելին, հետազոտությունների և վերլուծությունների իրականացումը հնարավորություն է տալիս նաև դուրս բերել առկա խնդիրների լուծման հավանական ուղիները՝ ամփոփելով դրանք հետազոտությունների արդյունքներից բխող առաջարկությունների և եզրակացությունների մեջ: Ստորև ներկայացնում ենք ՓԻՆԲ Արմենիայի իրականացրած հետազոտությունները, վերլուծությունները և այլընտրանքային զեկույցները:

### «Մենք և մեր իրավունքները»

«Մենք և մեր իրավունքները» երկու փուլից բաղկացած սոցիոլոգիական հետազոտություն և իրավական վերլուծություն է: Հետազոտություններն ուղղված են եղել պարզելու, թե ԼԳԲՏ անձինք խտրականության և անհանդուրժողականության ինչպիսի դրսևորումների են հանդիպում առօրյա կյանքում և մասնագիտական գործունեության





մեջ, առողջապահական, կրթական և տեղեկատվական, իրավապաշտպան և այլ ինստիտուտների կողմից, ինչպես նաև բացահայտել, թե Հայաստանում որքանով են պաշտպանված ԼԳԲՏ անձանց իրավունքները: Սրանով նաև նպատակ ունեինք պարզելու, թե հանրությունը որքանով է տեղեկացված սեռականությանն առնչվող հիմնահարցերի մասին, որքանով է տեղեկացված հենց ԼԳԲՏ անձանց մասին, ինչպես նաև ինչպիսի վերաբերմունք/դիրքորոշում ունի ԼԳԲՏ անձանց հանդեպ:

### ***Մենք և մեր իրավունքները. սոցիոլոգիական հետազոտություն 2010թ.***

«Մենք և մեր իրավունքները. սոցիոլոգիական հետազոտության» անցկացումը հնարավորություն է ընձեռել կազմակերպությանն անմիջապես ԼԳԲՏ անձանցից ստանալ ստույգ տեղեկատվություն մեր երկրում ԼԳԲՏ անձանց իրավունքների ոտնահարման դեպքերի վերաբերյալ և ինչպես են իրավունքի ոտնահարման տվյալ դեպքերը անդրադարձել ԼԳԲՏ անձանց կյանքի, կենսակերպի վրա: Անձը չի կարող իրենց զգալ տվյալ պետության լիիրավ քաղաքացի այն պարագայում, երբ տվյալ անհատի իրավունքները ոտնահարվում են հասարակության կողմից: Սույն ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ ԼԳԲՏ անձանց հանդեպ խտրական վերաբերմունքը սկսվում է ընտանիքից, որը կարող է արտահայտվել ինչպես նրանց հանդեպ շփման մերժմամբ և/կամ դադարեցմամբ, տնից դուրս հանելով, այնպես էլ նրանցից առհասարակ հրաժարվելով: Այնուհետ, տվյալ խտրականությունը շարունակվում է կյանքի գրեթե բոլոր փուլերում և կյանքի բոլոր իրավիճակներում՝ ուսում և աշխատանք, զինվորական ծառայություն, առողջապահական ծառայություններից օգտվելիս, ՁԼՄ-ներում և անգամ շփման և ժամանցի անցկացման վայրերում: Քիչ չեն գաղտնիության և անանունության սկզբունքի, անձնական կյանքի անձեռնմխելիության խախտման դեպքերը, որոնք առավել հաճախ հանդիպում են ՁԼՄ-ների հրապարկումներում, առողջապահական և հոգեբանական ծառայություններից օգտվելիս, ինչպես նաև իրավապահ մարմիններում և զինկոմիսարիատներում: ԼԳԲՏ անձինք իրենց իրավունքները չեն առանձնացնում այլ անձանց իրավունքներից, ինչպես նաև քննադատում են տարբերակման

ցանկացած փորձ: Հետազոտության շրջանակներում հարցված ԼԳԲՏ անձանց գնահատմամբ նրանք հավասարապես իրավունք ունեն հասարակությունից մեկուսացված և օտարված չլինելու, ծաղրի չենթարկվելու, չհետապնդվելու, չհալածվելու և որ կարևոր է, ընդունված լինելու: Հետազոտության ընթացքում հավաքված տեղեկատվության վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ ԼԳԲՏ անձանց կյանքի իրադրությունը բարելավելու և նրանց իրավունքների լիարժեք պաշտպանության համար անհրաժեշտ է մի կողմից իրականացնել օրենսդրական փոփոխություններ՝ ԼԳԲՏ անձանց հանդեպ ցանկացած տեսակի խտրականության բացառման համար, մյուս կողմից փոփոխել մեր հասարակությունում առկա կարծրատիպերն ու նախապաշարմունքները սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հարցերի առնչությամբ, որոնք կնպաստեն մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի բարձրացմանը, հանդուրժողականության սերմանմանը, ինչպես նաև կհանդիսանան դրական քայլ ՀՀ ժողովրդավարացման գործընթացում:

### ***Մենք և մեր իրավունքները. իրավական վերլուծություն, 2010թ.***

Հետազոտության իրականացման սույն փուլի ընթացքում ՀՀ օրենսդրական դաշտի վերլուծության միջոցով փորձ է կատարվել պարզելու, թե որքանով է ՀՀ իրավական դաշտը երաշխավորում մեր երկրի քաղաքացի համարվող ԼԳԲՏ անձանց պաշտպանությունը, իրավունքի պաշտպանության ինչպիսի երաշխիքներ են ներառված առկա օրենսդրության մեջ, ինչպես նաև ինչպիսի համալիր միջոցառումներ կան կամ ենթադրվում են, որ պիտի լինեն՝ բացառելու սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով հանցագործությունների կատարումը, իսկ կատարելու դեպքում համապատասխան պատժի սահմանումը: Հետազոտության ժամանակ հավաքված տեղեկատվության վերլուծության արդյունքում հետազոտության մեջ ներգրավված փորձագետները տվել են ԼԳԲՏ իրավունքների հետ կապված իրավիճակի ընդհանուր նկարագիրը, այդ թվում՝ ԼԳԲՏ անձանց պատկերացումները սեփական իրավունքների մասին, նրանց կարծիքները խտրական վերաբերմունքի և հոմոֆոբ վարքի դրսևորումների վերաբերյալ՝ Հայաստանի տարբեր շրջաններում, ինչպես նաև Հայաստանի և այլ երկրների համեմատության մեջ: Իրավական վերլուծության արդյունքում փորձագետները եկել են այն եզրակացության, որ ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանությանն առնչվող ոլորտը կարգավորող իրավական դաշտը ոչ միայն միասնականացված չէ,

այլ նաև օրենսդրական դաշտում բացակայում են հասկացության սահմանումների օրենսդրական բնորոշումներ՝ ոլորտի առնչությամբ օրենսդրական ամրագրումը, որը կերաշխավորի խմբի իրավունքների պաշտպանության հնարավորությունները: Հայաստանի Հանրապետությունը 2008թ. ի վեր ստորագրել և վավերացրել է միջազգային պայմանագրեր և միացել է տարբեր հռչակագրերի՝ սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության վերաբերյալ, որոնցում ամրագրված է ցանկացած տեսակի խտրականության վերացումը ԼԳԲՏ անձանց նկատմամբ: Այդ փաստաթղթերում հիմնականում դատապարտվում է խտրական վերաբերմունքը՝ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ՝ անկախ սեռական կողմնորոշումից և գենդերային ինքնությունից: Այդ պայմանագրերից շատերը ստորագրվել և վավերացվել են Հայաստանի Հանրապետության կողմից, որով պետությունը պարտավորություններ է ստանձնել իրականացնել այդ դրույթները:



***Մենք և մեր իրավունքները. ԼԳԲՏ անձանց հանդեպ հանրային վերաբերմունքը Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքներում, 2011թ.***

«ԼԳԲՏ անձանց հանդեպ հանրային վերաբերմունքը Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքներում» հետազոտությունը քանակական սոցիոլոգիական հետազոտություն է, որի նպատակը հետևյալ հիմնահարցերի վերաբերյալ քանակական տվյալների հավաքագրումն է և վերլուծությունը.

խոցելի խմբերը Հայաստանում,

տեղեկացվածություն ԼԳԲՏ անձանց մասին,

վերաբերմունք/դիրքորոշում ԼԳԲՏ անձանց հանդեպ:

Ընդհանուր առմամբ սույն հետազոտության շրջանակներում իրականացվել է 1156 հարցազրույց Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքներում:


Հետազոտության արդյունքում պարզ դարձավ, որ հայաստանյան հասարակությունը ԼԳԲՏ անձանց չի դիտարկում որպես խոցելի խումբ: Հետազոտության ընթացքում հավաքված տեղեկատվության արդյունքում կարելի է ենթադրել, որ ԼԳԲՏ անձանց նկատմամբ բացասական վերաբերմունքը մեծամասամբ պայմանավորված է սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հարցերի շուրջ հասա-

րակության տեղեկացվածության և գիտելիքի պակասով: Հետազոտությունը պարզորոշ կերպով հիմնավորեց, որ հայ հասարակության մեջ առկա են ընկալման և վերաբերմունքի խնդիրներ՝ կապված ԼԳԲՏ անձանց հետ: Հարցվողների 71.5%-ը կարծում է, որ պետությունը պետք է պայքարի ԼԳԲՏ անձանց դեմ:

Ուստի, այսօր ԼԳԲՏ անձինք Հայաստանում ընկալվում են այնպես, ինչպես որ տասնամյակներ առաջ ծախլիկներն էին ընկալվում՝ «շեղվածներ», որոնց պետք է ,օգնել, որպեսզի «նորմալանան», իսկ չենթարկվողներին էլ՝ հեռացնել, օտարել հասարակությունից:

Այս հետազոտությունն իր տեսակի մեջ առաջինն է Հայաստանի համար և այն չափազանց կարևոր է: Հետազոտությունը ոչ միայն հայաստանյան իրականությունը տեսնելու հնարավորություն է տվել, այլև հիմք է հետագա քայլերի իրագործման համար, ինչպես նաև ապագա հետազոտությունների համար ծառայում է որպես սկզբնական տեղեկատվության համընդգրկուն աղբյուր:

## **Հայաստանում ԼԳԲՏ անձանց իրավունքների մոնիթորինգ, 2013թ.**



2012թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսների ընթացքում «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» հասարակական կազմակերպությունը նախաձեռնել և իրականացրել է ԼԳԲՏ անձանց իրավունքների մոնիթորինգ:

Մոնիթորինգն ուղղված է եղել Հայաստանում ԼԳԲՏ անձանց իրավունքների շուրջ իրադրության ուսումնասիրությանը՝ կենտրոնանալով վերջին երկու տարիների վրա: Սույն մոնիթորինգը նպատակ է հետապնդել համալրել «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» ՀԿ նախկինում արված երկու հետա-

զոությունները, որոնք իրականացվել են «Մենք և մեր իրավունքները» ծրագրի շրջանակներում:


Մոնիթորինգի ընթացքում ԼԳԲՏ անձանց իրավունքների ուսումնասիրումներն ուսումնասիրվել են հասարակական կյանքի այնպիսի ոլորտներում և ինստիտուտներում, ինչպիսիք են կրթությունը, զբաղվածությունը, ընտանիքը, առողջապահական համակարգը, ոստիկանությունը, բանակը, կրոնը և սոցիալական շրջապատը:

Ընդհանուր առմամբ հարցմանը մասնակցել է 111 մարդ, որոնցից 13-ը իգական և 98-ը արական սեռի ներկայացուցիչներ են:

Հետազոտության ընթացքում հավաքված տեղեկատվության վերլուծության ընթացքում հետաքրքիր մանրամասներ են դուրս բերվել տարբեր ուսումնասիրվող ոլորտներում ԼԳԲՏ անձանց իրավունքների ոտնահարումների մասին: «ԼԳԲՏ իրավունքների ոտնահարման մոնիթորինգ» սոցիոլոգիական հետազոտության ընթացքում հավաքված և վերլուծած տեղեկատվության հիման վրա ՓԻՆԶ Արմենիան մշակել և ներկայացրել է առաջարկությունների փաթեթ ՀՀ պետական մարմիններին, ՋԼՄ-ներին, ՀԿ-ներին, մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակին, ինչպես նաև մարդու իրավունքների ոլորտում գործառնող միջազգային կազմակերպություններին:

Հայաստանը հռչակված է որպես ժողովրդավար պետություն, որի հիմնական ուղենիշը լիբերալ արժեքների ինստիտուցիոնալիզացումն ու կիրարկումն է, ուստի պետությունը և շահագրգիռ բոլոր կազմակերպություններն ու միությունները՝ գործելով ՀՀ Սահմանադրության և գործող օրենքների շրջանակներում, պետք է հնարավորինս նպաստեն հասարակության՝ որպես ժողովրդավարական մշակույթի կրողի ձևավորման գործին:

## ԼԳԲՏ էմիգրացիայի ազդեցությունը Հայաստանի տնտեսական ցուցանիշների վրա 2014



Ինչպե՞ս ցույց տալ, որ ԼԳԲՏ (լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր) անձինք հասարակության մի մասն են և իրենց ինքնությունն ամենևին չի նվազեցնում պետությանն օգտակար լինելու հանգամանքը: Միջոցներից մեկը՝ կատարել սոցիալ-տնտեսական հետազոտություն՝ պարզելու, թե իրենց աշխատուժով ինչ օգուտներ կարող են տալ ու սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականության պատճառով ԼԳԲՏ անձանց արտագաղթի դեպքում ինչ կորուստներ կկրի պետությունը:

2011-2013թթ. համար ՀՆԱ (Համախառն ներքին արդյունք) եղել է 88 միլիոն, 365 հազար ԱՄՆ դոլարով պակաս, իսկ նույն ժամանակահատվածում բյուջեի եկամուտները կարող էին մոտ 20 միլիոն

դրվարով մեծ լինել, եթե խտրականության պատճառով հեռացած ԼԳՏ անձինք մնային Հայաստանում: Առաջիկա ավելի քան 36 տարիների ընթացքում (մինչև 2011-2013թթ. արտագաղթած ԼԳՏ-ների թռչակի անցնելը) կկորցնի մոտ 2 միլիարդ դոլար եկամուտ՝ 2014թ. հունվարի 1-ի գնողունակությամբ:

2014-2025թթ (առաջիկա 12 տարիներին) ԼԳՏ անձանց արտագաղթի պատճառով ՀՆԱ-ն կունենա մոտ 3 միլիարդ դոլարի կորուստ՝ 2014-ի հունվարի մեկի գնողունակությամբ և PPP-ով ճշգրտված, իսկ բյուջեն՝ 370 մլն դոլար՝ հաշվարկված 2014-ի հունվարի մեկի գնողունակությամբ: Այդ մասին է փաստում «ԼԳՏ էմիգրացիայի ազդեցությունը Հայաստանի տնտեսական ցուցանիշների վրա» սոցիոլոգիական-տնտեսական հետազոտությունը, որի նպատակն էր հետազոտել 2011-2013թթ. ընթացքում ԼԳՏ համայնքի նկատմամբ առկա խտրականության հետևանքով ԼԳՏ անձանց անվերադարձ արտագաղթի ազդեցությունը Հայաստանի տնտեսական ցուցանիշների վրա և արտացոլել այդ փոփոխությունները երկարաժամկետ հեռանկարում: Փորձագիտական հարցումները ցույց են տալիս, որ ի տարբերություն մյուս արտագաղթողների, որոնց երկիրը լքելու հիմնական պատճառը տնտեսական խնդիրներն են, ԼԳՏ անձիք հիմնականում հեռանում են իրենց նկատմամբ խտրականության պատճառով:

Աշխատաշուկայում խտրականության վերացումն այն կարևորագույն քայլն է, որը թույլ կտա պայքարել խտրականության դեմ նաև այլ ոլորտներում և դնել հասարակությանն առավել ժողովրդավար հիմքերի վրա: Հասկանալի է, որ տնտեսական դրության բարելավումը շատ ավելի բարդ և երկարատև գործընթաց է՝ հաշվի առնելով այս նպատակով ոչ միայն ներքին, այլև արտաքին խնդիրների հաղթահարման կարիքները (ասվածից չի հետևում, որ տնտեսական զարգացման քաղաքականությունը երկրորդական է կամ անհնար է իրագործել): Այնինչ, արտագաղթի խթանիչ սոցիալ-հոգեբանական գործոնները շատ ավելի հեշտ կառավարելի են պետական հաստատությունների համար՝ անհրաժեշտ նպատակադրման և պատասխանատու մոտեցման պայմաններում: Ուրեմն, հետևողական պետական քաղաքականության դեպքում մենք հնարավոր ենք համարում մարդկանց սոցիալ-հոգեբանական ճնշվածությունների հաղթահարումն ու Հայաստանից արտագաղթողների և արտագաղթի տրամադրությունների զգալի նվազեցումը կարճ ժամանակահատվածում, հատկապես ԼԳՏ մարդկանց շրջանում, որոնց համար առաջնահերթ էմիգրացիոն խթանիչները հենց սոցիալ-հոգեբանականի շարքում են:

## ԼԳԲՏ անձնաց իրավունքների ուսնահարման իրադրությունը. տարեկան զեկույցներ 2011, 2012, 2013, 2014թթ.



2011թ-ից կազմակերպությունն ամեն տարի անդրադառնում է ԼԳԲՏ անձանց իրավունքների ուսնահարումների դեպքերին՝ ԼԳԲՏ անձանց հիմնախնդիրների և հասարակական կյանքի փոփոխություններին, որոնք այս կամ այն կերպ առնչվում են ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանությանը, ինչպես նաև սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականության խթանման նշանակալի դեպքերին՝ դրանք ամփոփելով «ԼԳԲՏ անձանց իրավունքների ուսնահարման իրադրությունը» զեկույցում: Ձեկույցը տալիս է տվյալ տարվա ընթացքում դեպքերի և իրադարձությունների հակիրճ նկարագիրը՝ ինչպես ազգային, այնպես էլ տեղական և մարզային մակարդակներում՝ փաստագրելով ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքների շուրջ հասարակությունում առկա տրամադրվածությունները:



Ձեկույցներում կազմակերպությունն ամփոփում է բռնության, ատելության և խտրականության տարբեր դեպքեր, անդրադառնում է ԼԳԲՏ անձանց նկատմամբ խտրականության դեմ պետական պայքարին կամ դրա խթանմանը, ինչպես նաև կոնկրետ իրավունքների ուսնահարումների տարածվածությանը: 2011թ-ի տարեկան զեկույցի հաջողությունը և կարևորությունը գիտակցելով՝ կազմակերպությունը նման զեկույցների հրապարակումն ու տպագրումը դարձրել է ամենամյա պրակտիկա:

## Այլընտրանքային զեկույցներ

Նպատակ ունենալով լուսաբանել Հայաստանում մարդու իրավունքների համատարած և պարբերական բնույթ կրող խախտումները, որոնց զոհ են դառնում ինչպես ԼԳԲՏ, այնպես էլ այլ խոցելի խմբերի ներկայացուցիչները, «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» ՀԿ-ն մարդու իրավունքների տարբեր միջազգային կառույցներին պարբերաբար այլընտրանքային զեկույցներ է ներկայացնում:

***Լեսբի, գեյ, բիսեքսուալ և տրանսգենդեր (ԼԳԲՏ) անձանց իրավունքների ոտնահարումները Հայաստանում. այլընտրանքային զեկույց*** - ներկայացվել է Մարդու իրավունքների կոմիտեի 105-րդ նստաշրջանի քննարկման համար, հուլիս 2012թ, Ժնև, Շվեյցարիա: Տվյալ այլընտրանքային զեկույցը պատրաստվել է «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» հասարակական կազմակերպության, Հանուն մարդկային կարիքների և մարդու իրավունքների «Հըրթլենդ» դաշինքի, ԻԼԳԱ-Եվրոպայի, ինչպես նաև Ջորջ Վաշինգտոնի անվան համալսարանի իրավագիտության դպրոցի, Մարդու իրավունքների միջազգային կլինիկայի և ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի կողմից այն մասին, թե Հայաստանն ինչպես է իրականացնում Մարդու քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրով (ՔՔԻՄԴ) ստանձնած իր պարտավորությունները: Մասնավորապես, զեկույցն իր մեջ ամփոփել է ԼԳԲՏ անձանց իրավունքների առնչությամբ տվյալ Դաշնագրով ամրագրված իրավունքների ոտնահարումների դեպքերը, ինչպես նաև պետության պարտավորություններին՝ կանխարգելելու ատելության հիմքով հանցագործությունները, ստեղծելու իրավունքների պաշտպանության համար բարենպաստ միջավայր:

***Կանանց և լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր անձանց իրավունքների իրադրությունը Հայաստանի Հանրապետությունում. համընդհանուր պարբերականի դիտարկումներ (ՀԴԴ) այլընտրանքային զեկույց*** - 2014թ-ի հունիսին «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք», «Հասարակություն առանց բռնության», «Կանանց ռեսուրսային կենտրոն», «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ները, «Մարդու իրավունքների տուն հիմնադրամի» հետ միասին Համընդհանուր պարբերականի դիտարկումների 21-րդ շրջանին ներկայացրել են համատեղ այլընտրանքային զեկույց: Ձեկույցը շեշտադրել է կանանց նկատմամբ խտրականության և բռնության տարաբնույթ ձևերի առկայությունն ու տարածվածությունը Հայաստանում, ատելության քարոզը ԼԳԲՏ անձանց նկատմամբ, սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականությունը, ինչպես նաև սպառնալիքներն ու վտանգները մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող անհատների նկատմամբ, ովքեր հատկապես ներգրավված են կանանց և ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանության գործում:



Չնայած իր երիտասարդ տարիքին, կազմակերպությանը հաջողվել է աչքի ընկնել իր թափանցիկ, բաց և նվիրյալ աշխատանքով: Այն հաստատել է կայուն համագործակցություն սեռական առողջության և մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում գործող տեղական և միջազգային կազմակերպությունների հետ:



ՓԻՆՔ Արմենիան հանդիսանում է **«Հարավկովկասյան իրավապաշտպանների ցանցի»** անդամ, որը միավորում է 30 իրավապաշտպան հասարակական կազմակերպությունների Հայաստանից, Ադրբեջանից և Վրաստանից: Ցանցը ձգտում է Հարավային Կովկասում օժանդակել իրավապաշտպանների համար անվտանգ և նպաստավոր միջավայրի ստեղծմանը և ամրապնդել նրանց ծայները տարածաշրջանում և միջազգային ասպարեզում:



ՀԱՅԿԻՄԱՆ ՈՒՅՑՈՍ ՀԱՄԻՄ  
ԵՐԵՎԱՆ

Ֆեդոթացման այն բարդությունները, որ այցելուները կարող են ունենալ իրենց իրավունքները պաշտպանելու համար աջակցություն և ծառայություններ ստանալիս:



2010թ. յոթ ՀԿ-ներ, ներառյալ ՓԻՆՔ Արմենիան, կազմավորեցին **«Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության»** կոալիցիան, որը ձևավորվեց ընտանեկան բռնության զոհ՝ քսանամյա Ջարուհի Պետրոսյանի ողբերգական մահվան կապակցությամբ: Կոալիցիայի գործունեության շրջա-

նակներում ՓԻՆՔ Արմենիան ջանում է պաշտպանել կանանց իրավունքները և վերջ տալ ընտանեկան բռնությանը, ինչպես նաև ջատագովում է «Ընտանեկան բռնության կանխարգելման մասին» օրենքի ընդունումը Հայաստանում:



Հայաստանում սեռական առողջության, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի և մարդու իրավունքների պաշտպանության հիմնահարցերով զբաղվող մի շարք կազմակերպությունների հետ ակտիվ համագործակցության շնորհիվ «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» ՀԿ-ն իրականացրել է տարաբնույթ հանրային և հասարակական միջոցառումներ և՛ Երևանում, և՛ Հայաստանի մարզերում: Գործընկերների միջև նման ամուր համագործակցությունը հիմք հանդիսացավ **«ՁԻԱՀ-ի խնդրի ջատագովության և հետազոտության խմբի»** ստեղծման համար: Դրա նախաձեռնողներն են «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք», «Իրական աշխարհ, իրական մարդիկ», «Կանանց ռեսուրսային կենտրոն» և «Դրական մարդկանց հայկական ցանց» ՀԿ-ները: Խումբը նպատակ ունի նախաձեռնել համատեղ գործողություններ խոցելի խմբերի իրավունքների պաշտպանության և իրավունքների ջատագովման համար, ինչպես նաև սևեռել հանրային ուշադրությունը սեռական առողջության խնդիրների վրա:



Մեր կազմակերպությունը հանդիսանում է նաև **ՁԻԱՀ-ի Եվրոպական շարժման** անդամ, որը հիմնադրվել է 2004 թ-ին և դարձել է ՄԻԱՎ-ին առնչվող տարածաշրջանային ամենամեծ ցանցերից մեկը: Այս ցանցը անցնում է Եվրոպայի Միության սահմաններից այն կողմ և ընդգրկում է 53 երկրներ Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում: Ցանցի առաքելությունն է Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում միավորել քաղաքացիական հասարակությանը ՄԻԱՎ-ին առավել արդյունավետ հակազդելու նպատակով: Ցանցի անդամ են մոտավորապես 400 տարբեր հասարակական կազմակերպություններ, ազգային ցանցեր, ՁԻԱՀ-ի խնդրի առնչությամբ ծառայություններ մատուցող կազմակերպություններ, ակտիվիստներ և ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց համայնքային խմբեր:

2012-ից ՓԻՆՔ-ն ընդգրկվել է **ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ ուղղված միջոցառումները համակարգող հանձնաժողով**

**վում (ՄՀՀ):** Միջոցառումների համակարգող հանձնաժողովը կենտրոնական նշանակություն ունի Գլոբալ Հիմնադրամի գործունեության և որոշումների կայացման գործընթացում: Միջոցառումների համակարգող հանձնաժողովում ներգրավված են ինչպես հանրային, այնպես էլ մասնավոր և կառավարական սեկտորի ներկայացուցիչներ, հասարակական կազմակերպություններ, ակադեմիական ինստիտուտներ, մասնավոր սեփականատերեր և տվյալ հիվանդություններով ապրող անձիք:

2012թ-ից ՓԻՆԲ-ը նաև **«ՀՀ Առողջապահության նախարարության ԶԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի էթիկայի կոմիտեի»** անդամ է: Կազմակերպության իրավաբանը հանդիսանում է կոմիտեի փոխնախագահը:

2011թ. ՓԻՆԲ Արմենիան միացավ **Հոմոֆոբիայի դեմ պայքարի տարածաշրջանային ցանցին:** Այն նպատակ է հետապնդում ստեղծել ԼԳԲՏ ցանց հոմոֆոբիայի դեմ պայքարի համար, որը կներառի միջին ասիական, կովկասյան և բալկանյան երկրները: Ցանցի նպատակն է տարածաշրջանում ապահովել հասարակական, մշակութային և քաղաքական կյանքի մի մակարդակ, որի պարագայում ԼԳԲՏ մարդիկ կարող են ինքնարտահայտվել և ապրել առանց թաքցնելու: Ավելին, ցանցը նպատակ է հետապնդում տարածաշրջանային միասնականության միջոցով ԼԳԲՏ անձանց և գործող կազմակերպություններին առավել զորացնել: Այն նաև փորձում է հասնել ՁԼՄ-ների կողմից ատելություն տարածող և ազգայնականություն բորբոքող, խտրական, ռազմատենչ, սեքսիստական և հոմոֆոբ լեզվի փոփոխմանը և խաղաղասեր ՁԼՄ-ների զարգացմանը:




2011թ-ից ՓԻՆԲ-ը **ԻԼԳԱ** և **ԻԼԳԱ-Եվրոպա** կազմակերպությունների անդամ է: ԻԼԳԱ-ն 110 երկրների 1100 անդամ կազմակերպությունների միություն է, որը 1978թ-ից սկսած ամբողջ աշխարհում պայքարում է լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր և ինտերսեքս անձանց իրավունքների համար: ԻԼԳԱ-Եվրոպան աշխատում է լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր և ինտերսեքս (ԼԳԲՏԻ) անձանց իրավունքների և հավասարության համար Եվրոպա աշխարհամասում: ԻԼԳԱ-Եվրոպան պաշտպանում և ներկայացնում է ԼԳԲՏԻ անձանց իրավունքները և խնդիրները այնպիսի եվրոպա-

կան կազմակերպություններում, ինչպիսիք են Եվրոպական Միությունը (ԵՄ), Եվրոպայի Խորհուրդը (ԵԽ), Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպությունը (ԵԱՀԿ):



2013թ-ի հոկտեմբերից ՓԻՆՔ-ը «Յունայթեդ» ցանցի անդամ է: Այն եվրոպական ցանց է, որը պայքարում է նացիոնալիզմի, ռասիզմի և ֆաշիզմի դեմ՝ պաշտպանելու միգրանտների և փախըստականների իրավունքները: «Յունայթեդ»-ը համակարգում, աջակցում և հզորացնում է ցանցի անդամ 560 կազմակերպությունների գործունեությունը եվրոպական 46 երկրներից: Ցանցի անդամ կազմակերպությունները միմյանց հետ կիսում են այնպիսի արժեքներ, ինչպիսիք են միջազգային հաղորդակցությունը, բազմազանությունը և մարդու իրավունքները: «Յունայթեդ»-ն աշխատում է այնպիսի խնդիրների շուրջ, ինչպիսիք են ուղղակի և անուղղակի խտրականությունը, ատելության հիմքով հանցագործությունները և անհանդուրժողականությունը և կարևորում է միջնաշխույթային հաղորդակցությունը, հավասար իրավունքները բոլորի համար:



Ֆինանսական հաշվետվություն  
*Ստացված հիմնական  
դրամաշնորհներն ըստ տարիների*

2008

**Սեռական ճանապարհով փոխանցվող վարակների տարածման  
կանխարգելում** (6 ամիս)

Ֆինանսավորող՝ Նորվեգիայի թագավորության դեսպանատուն,  
Մոսկվա – 7.900 եվրո, համաֆինանսավորող՝ ՀՀ Սպորտի և երի-  
տասարդության հարցերի նախարարություն – 507.000 ՀՀ դրամ

2009

**Մենք և մեր իրավունքները** (6 ամիս)

Ֆինանսավորող՝ Քաունթերփարթ ինթերնեշնլ հայաստանյան  
ներկայացուցչություն – 3.408.400 ՀՀ դրամ

**Տղամարդկայնություն. Կոտրել կարծրատիպերը** (6 ամիս)

Ֆինանսավորող՝ Նորվեգիայի թագավորության դեսպանատուն,  
Մոսկվա – 75.925 մորվեգական կրոն

2010

**Բազմազանություն** (2 տարի և 5 ամիս)

Ֆինանսավորող՝ Նորվեգիայի Արտաքին գործերի  
նախարարություն – 720.000 մորվեգական կրոն

2011

**Մենք և մեր իրավունքները** (6 ամիս)

Ֆինանսավորող՝ Քաունթերփարթ ինթերնեշնլ – 2.377.500 ՀՀ դրամ

**Իրավական կլինիկա առավել վտանգի ենթարկվող բնակչության  
համար** (1 տարի)

Ֆինանսավորող՝ Բաց հասարակության հիմնադրամներ-  
Հայաստան, Իրական աշխարհի իրական մարդիկ ՀԿ-ի միջոցով  
– 5.334.610 ՀՀ դրամ

**ՄԻԱՎ/ԶԻԱՅ-ի կանխարգելում SUS-ների շրջանում Շիրակի և  
Լոռու մարզերում (1 տարի, 4 ամիս)**  
Ֆինանսավորող՝ Գլոբալ հիմնադրամ, Առաքելություն Արևելք  
ՄՕԿ միջոցով – 53.764 եվրո

## 2012

**ԼԳՔՏ անձանց իրավունքների իրավիճակի բարելավում  
Հարավային Կովկասում (10 ամիս)**

Ֆինանսավորող՝ ՍԻ-Օ-ՍԻ Նիդեռլանդներ – 16.515 եվրո

**Հակախտրականության օրենսդրության ջատագովություն (4 ամիս)**  
Ֆինանսավորող՝ Բաց հասարակության հիմնադրամներ-  
Հայաստան – 3.356 ԱՄՆ դոլար

**Ռազմավարական դատավարություն (1 տարի)**

Ֆինանսավորող՝ Բաց հասարակության հիմնադրամներ-  
Հայաստան – 4.720 ԱՄՆ դոլար

**Իրավական կլինիկա առավել վտանգի ենթարկվող բնակչության  
համար (1 տարի)**

Ֆինանսավորող՝ Բաց հասարակության հիմնադրամներ-  
Հայաստան, Իրական աշխարհի իրական մարդիկ ՀԿ-ի միջոցով  
– 6.685.520 ՀՀ դրամ

**ՄԻԱՎ/ԶԻԱՅ-ի կանխարգելում SUS-ների շրջանում (3 տարի)**

Ֆինանսավորող՝ Գլոբալ հիմնադրամ, Առաքելություն Արևելք  
ՄՕԿ միջոցով – 74.071 եվրո

**Հրատապ էվակուացիա**

Ֆինանսավորող՝ Ըրջենթ էքշն ֆանդ – 1.488 ԱՄՆ դոլար

**Անվտանգության միջոցների ձեռքբերում**

Ֆինանսավորող՝ Ֆրոնթ լայն դեֆենդերս – 1.511 եվրո

## 2013

**Սոցիալական հզորացում և կրթություն (3 տարի)**

Ֆինանսավորող՝ Նորվեգիայի Արտաքին գործերի  
նախարարություն – 1.145.000 նորվեգական կրոն

**Ընտանեկան բռնության մասին օրենսդրության ջատագովություն  
(Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիայի համար) (4 ամիս)**

Ֆինանսավորող՝ Բաց հասարակության հիմնադրամներ-  
Հայաստան – 10.640 ԱՄՆ դոլար

2014

**Իրավական կլինիկա առավել վտանգի ենթարկվող բնակչության համար (1 տարի)**

Ֆինանսավորող՝ Բաց հասարակության հիմնադրամներ-  
Հայաստան, Իրական աշխարհի իրական մարդիկ ՀԿ-ի միջոցով  
– 6.855.890 ՀՀ դրամ

**ԼԳԲՏ նշանակալի օրինակներ (4 ամիս)**

Ֆինանսավորող՝ Հենրիխ Բյոել Ստիվտունգ – 3.788 եվրո

**Ռազմավարական դատավարություն (1 տարի)**

Ֆինանսավորող՝ Բաց հասարակության հիմնադրամներ-  
Հայաստան – 4.000 ԱՄՆ դոլար


**Համակցված անվտանգության դասընթաց (1 ամիս)**

Ֆինանսավորող՝ Կվինա տիլ Կվինա հիմնադրամ – 4.042 եվրո

**Ընդհանուր աջակցության դրամաշնորհ (1 տարի)**

Ֆինանսավորող՝ Զիգրիդ Րաուզինգ Թրասք – 20.000 Մեծ  
Բրիտանիայի ֆունտ ստերլին





## Կազմակերպության ֆինանսական քաղաքականություն

Կազմակերպությունն ունի ֆինանսական քաղաքականություն, որը կարգավորում է ինչպես ներքին գործընթացներն, այնպես էլ դրամաշնորհ տրապադրող կազմակերպությունների հետ հարաբերությունները:


Կազմակերպությունը ֆինանսական միջոցներն ապահովում է դրամաշնորհների միջոցով: Դրամաշնորհի ստանալու նպատակով ձևավորվում է աշխատանքային խումբ, որը համապատասխան ծրագրային կամ ընդհանուր աջակցության դրամաշնորհի առաջարկ է ներկայացնում դոնոր կազմակերպությանը: Աշխատանքային խմբի կազմած առաջարկը բխում է կազմակերպության ռազմավարական պլանից:

ՀԿ-ն որպես ֆինանսական միջոց նաև կարող է ստանալ հանգանակություններ և անդամավճարներ:

Կազմակերպությունը չի դիմում և չի ընդունում ֆինանսավորում այնպիսի աղբյուրներից, որոնց եկամուտը ձևավորվում է ալկոհոլի, ծխախոտի և ոչ օրինական միջոցների արտադրությունից ու վաճառքից, նաև չի օգտվում այնպիսի կառավարությունների դրամաշնորհային ծրագրերից, որոնք ռեպրեսիաներ, ատելություն և խտրական օրենքներ են կիրառում ընդդեմ LQPS անձանց:







«Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք»  
ՀԿ-ի 2007-2014թթ. ծրագրային և ֆինանսական հաշ-  
վետվությունը պատրաստել է Երևանում 2015թ-ին  
«Զիգրիդ Ռաուզինգ Թրասթի» ֆինանսական աջակ-  
ցությամբ:



SIGRID RAUSING TRUST





+374 60 377277  
info@pinkarmenia.org  
www.pinkarmenia.org

Երևան, 2015թ.